

891.99.82

U - 28

2011-05

1950/ 28.

Խոշ կուսավորության ժողովրդական Կոմի-
սարիան—Սոցիալական զատկարակության գր-
խավոր փառաբանութեան

1-2

ՃՌԿՏԵԱԲԵՐ

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՔՐԵՍՈՄԱՏԻԱ

Կազմեց Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

891.99-82
Մ-28

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գ Ա 6 - 1 9 2 7

30/1927


891-99-82
Մ-28

ԱՐ.

ՀՈԿՏՈՒԹԵՐ

ԳԵՂԱՐՔԵԾՈՎԱԿԱՆ ՀՐԵՍՈՄԱՏԻՒ

Կազմեց. Աս. ՄԱՆՈՒԿՅԱՆ



6322

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎՈՒ - 1927



8775-56

ՅԵՄ. ՅԱՐԱԾԱԿԱՆ ՊԱՎՈՐՆԵՐ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԽԵՂԱՎԻՌԻՉՈՒՐՅՈՒՆ

Տասնյակ ու հարյուրավոր տարիներ կանցնեն. յերկրի վրա կյանքը կփոխ ի, կանհետանան կապիտալիստական կարգերի մնացորդները. կվերակազմվի Խորհրդավիճակը պետությունը. կչքանան, կանագետագունան այժմ գոյություն ունեցող որգաններ ից շատերը, այժմ գոյություն ունեցող որենքներից շատերը. Ժողովուրդները կուվորեն կառավարել իրենք իրենց, կառավարել ժողովրդական տնտեսությունը—առանց այսպիսի բազմաթիվ պետական հիմնարկությունների, առանց պետության. Կոկսի անհետանակ, այսինքն իրեն այդպիսին անպետքանակ և պետական իշխանությունը: Բայց և գարեր հետո, առանց հուզմունքի չի կարելի կարգալ այս մեծ ու հերոսական որերի վեպը, առանց խորին հուզման չի կարելի կարգալ հողի ու խաղաղության մասին յեղող այս գեկրեանները (որենքները): Դարեր տեսաց գոյուղացիների ու կալվածատերերի պաշտառը, ազնվականությունը դարերով նստած եր իր սիրավոր ստրուկների վզին: Թափահարեց Հոկտեմբերյան հեղափոխությունը՝ ու վանչացավ ազնվական դասը:

Իմպերիալիստական պատերազմն արյունոտ դաշինքով շղթայել եր մարդկանց մի հսկակական բազմությունն կարծես թե ժողովուրդներն ուժ չուսեցին պալքարելու ձակատների այդ արյունոտ իշխանության դեմ. Փորձ

պետք եր անել: 1917 թվի հոկտեմբերին ինչպիսի քերկ-
րալի արձագանգ տվեցին հաշտության մասին հնչվող բա-
ռերը, յերբ մարդկացին արյունու ու ուղեղը շաղախմբուժ
ելին ցեխի հետ Յեփողայի հարթավայրերում: Այն ժա-
մանակ մենք չկարողացանք կանգնեցնել այդ արյունուա-
նութությունը, բայց մենք կարողացանք կապիտալի փառ-
քի համար մեւնող հարյուր հազարավոր մարդկանց փր-
կել մահից: Դա առաջին պրոլետարական հեղափոխու-
թյունն եր—ենրա կազմակերպողը, նրան վոգեորողը, նրա
շունչն ու վոգին, նրա առաջնորդը Անդեն: Եր:

Թարգմ. Սիմոն

Ա. ՅԱԿՈՎԱՆԻ

Հոկտեմբերը

Մոսկվան դեռ յերբեք այնպես բագմանարդ չեր յե-
րեացել, ինչպես քաղաքացիական կովի առաջին որն ել
յերեւում: Բեռնատար ավտոմոբիլներն աղմկով սլանուա-
յին՝ լցված զինվորներով ու բանվորներով, ինչպես վա-
զեր՝ ճոճվող ծաղիկներով: Զորս կողմից կեցցեներ, աղա-
ղակներ, կցկտուր ու աններդաշնակ յերգեցողություն և
հրացանների տրաքոցներ ելին լսվում:

Գետիկը, գլխարկը ծոծրակը քաշելով, ամենավճռու-
կան դեմքով ու համարձակ գնում եր: Զինվորներով լըց-
ված ավտոմոբիլներն անցնելիս, նա զրզգված մոխրա-
գույն գտակը գլխից վերցնելով ու քաջարար ողի մեջ
ճոճելով՝ կեցցե յեր կանչում: Ու կաշվե գոտին մեջըին
զիլ հուզ տված ու հուզված, կարծես լողում եր ամբոխի
մեջ—նրա համար այնքան հեշտ եր զնալը:

Թէ ամբոխը, թէ փողոցը, թէ կեցցեների այդ բա-
ցագանչությունները և թէ ինքը—այդքուրը նրա համար

այնքան նոր ելին և ամեն ինչ այնպես զարմանալի կեր-
պով փռփռիվում եր, վոր Պետիկն ուզում եր և յերգել և
ծիծաղել ուրախությունից, ուզում եր հրացանը խլել և
ողի մեջ յերկար կրակել:

Սպառագինված զինվորներն ու բանվորները հավար-
փում ելին Ակորելեվյան հրապարակը զեներալ նահան-
դապետի հին, դեղնագույն ու խստագեմ ֆասադով տան
առջե: Ներսում հեղափոխական շատրն ե: Զինվորներն ու
բանվորները, հրացանները ձեռներին, ներս ելին մտնում
նեղ դանով, լցվում նուրբ զարդարված սենյակները, ու
մոխրագույն զանգվածով իրար ելին սեղմում սպիտակ
գահինձում ու վասկեզոծ բազրիքներով (ճաղեր) լայն սան-
ցովիքի վրա բարձրածայն խոսում ու ծխում ելին: Ծխա-
խոտի դառը ծուխը բոլոր սենյակներում զորշ ամպի նման
չողել եր ամբոխի գլխավերել:

Առաջին անգամն եր, վոր Պետիկը վոտ դրեց այդ
մեծ ու միշտ խորհրդավոր տունը, ուր իշխաններ, կոմսեր
ու փրկած զեներաններն ելին միայն ապրում: Միամիտ
գարմանքով նայում եր նա գաճած բարձր առաստաղնե-
րին, պատի մեծության հայելիներին, հսկայական գահինձի
սիպտակ մներին ու հպարտությամբ մտածում եր.

—Մենք հաղթեցինք...

Յեկ ուրախանում եր—հիմա մորը պատմելու համար
բան կունենա:

Բարձրահասակ, մորթե ոձիքով տաք վերարկու հա-
գած, բոլիքի պես խճճված ու թափթփված յերկար մազե-
րով զլիսաբաց մի մարդ, աթոռի վրա բարձրանալով ուժ-
ուին զոչեց. Կամերհերսկի փողոցը պետք և բռնել:

—Հնկերներ, կամաց:

Ինչ փոք մի բան ել բարձր ասաց, բայց Պետիկը
չասկացավ:

Բանվորներն աղմուկով խոսում ելին ու խոնվում,

— Դեպի Կամերհերսկի ընկերներ։ Հառաջ։

Ու իրար հրհրելով, սկսեցին խումբ-խուժք դուրս գալ ու գնալիս հրացանների փակիչները շմշկացնում եցին։ Պետիկը Լեռնաի Պետրովիչին ու Պրեսնացի ընկերներին ամբոխի մեջ կորցրեց ու անծանօթների հետ փողոց դուրս յեկավ։

Տվերսկուց ներքե հրացաններն անընդհատ վորոտում ելին։ Գեներալ-նահանգապալետի տան կողքին պահակներ ելին կանգնած, վորոնք նախազգուշացնում ելին Տվերսկով դեպի ցած գնացող բանվորներին ու զինվորներին։

— Ընկերներ, շղթայով։ Զգնուց։

Բանվորներն ու զինվորները գնալիս կունում, պատերի յետեն ելին թագնվում, սագերի պես իրար յետեից շարքով («դազեղազ») գնում։

Սալահատակը դատարկ եր, մի բան, վոր մարդկանցով լի ու աղմկալից փողոցներից հետո մարդու վրդովում եր։ Այստեղ արդեն թախիծն եր տիրում։

Պետիկի սիրտը զցում եր ու կրծքի տակ ձմլվում։ Նա զույգ ձեռքերով ամուռը կախ ընկավ հրացանից ու ամեն մի բողե կրակելու համար պատրաստ՝ մյուսների յետից գնում եր, նստելով ու կանգ տոնելով ինչպես և բոլորը, իր շարժումներով ու նույնիսկ քայլելու ձեռվ անգիտակցաբար նմանվելով նրանց։

— Պըտ, պըտ, զըտ, — շատ մոտիկ վորոտում ելին զարկերը։ Ինչ վոր մի բան սուր ցրտկաց սալահատակի քարերի մեջ։

— Թոշում են, սիրելիք, ծիծաղում ե առջեից գնացող զինվորը։

Պետիկը վախեցավ։

Մեկը մյուսի յետեից բոլորը պատից պատ անցան ու հագաքվեցին կամերհերսկու անկյունում, ուր արդեն բանվորների և զինվորների փոքրիկ խմբել ելին կանգնած

և թագնվեցին անկյունի կարմիր տան յետեր, վորի ճակատին «գինեվաճառանոց» մակագրություն կրող ցուցանակն ե կախված։ Այստեղ ողը լիքն եր սուլոցներով։

Բոլորն անծանոթ բանվորներ ելին։ Պետիկն ուզում եր նրանց հետ խոսել, հարց ու փորձ անել, թե թշնամիները վորտեղ են տափած, վախենում եր։

Հրացան կրակելու ցանկությունը նրա մեջ նոր թափով բռնկվեց. բայց այստեղ ել կրակող չկար. իսկ մենակ կրակելուց վախենում եր. բա վոր հանկարծ հայնոյեն Բոլորը լուս կանգնած ելին, անվճռականորեն վատքի մեկը վերցնում մյուսն ելին գնում, կոշիկներն իրար խփում, ասես բոլորն ել մրսում ելին. բոլորի դեմքերն ել գորշ ելին՝ մոխրագույն շրթունքներով։

Կարմրագեմ Պետիկն աշխույժ ու խլվան աչքերով բոլորի հայացքն իր վրա դարձրեց։ Ա՛խ, նրա սիրտն ինչպես եր ուզում կրակել։ Բայց կրակող չկա...։ Միայն Տվերսկուց ցած հարեան նրբանցքի անկյունում զինվորներ ելին խմբվում ու նրանց մեջ բանվորների սե կերպարանքներ ելին սուր կերպով տշքի ընկնում։ Նրանք դեպի Ախուսնի փողոցն ելին կրակում։ Պետիկի համբերությունը կարգեց։

— Իսկ այստեղից շի կարելի կրակել։

— Թու այստեղ ում վրա պիտի կրակես։ Այստեղ ուր ե մարդ, վոր կրակես։ Այ, են մեկել անկյունը գնա, — բարձր պատախանեց շինելի ոձիքը բարձրացրած ու մոխրագույն գլխարկն ականջները քաշած, բարձրահասակ զինվորը։

— Իսկ այստեղ գնալը հա յերկյուղալի չե։

Փորձիր։

Զինվորը վոաներով ծուլ ծուլ դոփեց գետինը, լոեց ու հանկարծ աշխուժացավ։

— Գնանք, ընկեր, միասին, յես առաջ ընկնեմ, իսկ

զու յետիցս յեկ: Միասին մարդ ուրախ կղճա: Միայն
դպուի՛: Հենց վոր կլրակեն դու կպառկես:

— Վնաս չունի գնանք:

— Զուրտեղն եր բիթխոթում, — ալարելով ասաց մե-
կը յետից:

— ԵԵ, տես, հա, բան ասեց — բարկացած պատաժա-
նեց զինվորը, — գնանք:

Նա զլիարկն ավելի խոր իջեցրեց, հրացանն ուղղեց,
գոտեալնդվից ու պատի յերկարությամբ կուզեկուզ, արագ
վազ տվեց մայթի վրայով: Պետիկը վազեց նրա յետից:
Անցան մեկ տուն, մյուսօք: Ինչ վոր մի տեղ տրաքոց
դուրս յեկավ ու զինվորի զլիավերել լուսամուտը տիսուր
զնդաց: Զինվորը վստարուներով իրեն գցեց գեղատան
կանաչ պատշգամբը ու կողքին կուչ յեկավ: Նա ծանր շըն-
շում եր:

— Ե՞դ վժրտեղից. — վրդովված հարցրեց Պետիկը:

— Ով ե խմանում, վոր ջանրսից: Կտուրից պիտի
լինի, վժրտեղից:

— Զե վոր կարող են սպանել:

Զինվորը խոժուաված ու խորը հայացքով նայեց յե-
րիտասարդին ու այդ ըովելին Պետիկը նկատեց, վոր
զինվորը ցրտատարի սես դողում ե, իսկ զեմքը սպրտնել
և աչքերը տարորինակ լախացել ու փայլում են: Յեր-
կառուղը պատեց: Ծնոտները հազիվ սեղմելով զինվորն ա-
տամերի արանքով ասաց.

— Սպանել կարող են... ինչպես ջուրը խմեն: Մեկել
են աեսար սպանեցին:

Յերկուսն ել ամուր սեղմիելով պատշգամբի քարերին
մոտ հինգ րոպե նստեցին: Զինվորը շարունակ դողում եր
ու ատամների արանքից ինչ վոր մեկին հայնում:

Անինչ կրակոցը դադարել եր: Զինվորը վստաքի կանդ-
նեց ու սկսեց ուշի ուշով զննել տների տանիքները:

Ապա քաշեց, պատշգամբի յետերց թռավ ու փողոցի միջով
փախավ: Պետիկն իրեն կորցրած, համարյա չգիտակցելով.
թե ինչ ե անում, ինքն ել վազ տվեց: Գնդակները ջղա-
նորեն ու անկարգ վզվզում ելին գիշավերեներից: Չորս
բոլորը գոգոսում եր: Առջեկց վազող զինվորն անհար-
մար սպլթաքեց, հրացանը ձեռքից բաց թողեց ու բարձ-
րաձայն հայնուելով, շրպաց սալահատակին: Պետիկը
ուեսավ, վոր զինվորի գլուխն իսկունք քարին դիպավ ու
նրա մոխրագույն զլիարկը զիսիցը թռավ:

— Ֆա... յա... Ենւու, շուտ: — Բացագանչեցին զինվոր-
ներն անկյունից:

Պետիկը վազ տվեց՝ փողոցն անցավ: Զինվորն ըն-
կած եր ելի այնտեղ, վորտեղ վայր եր ընկել: Իսկ նրա
շուրջը սալահատակի քարերի վրա գնդակներ ելին պրա-
պրտում ու յերեքն ել այդ գնդակներից բարձրացող
հողի կտորներ ելին թռչում...:

— Պատրաստ ե - կցկտուր ասացին անկյունում կանգ-
նած զինվորները, — սատանի բաժին պիտի լիներ:

Նրանք այնպես բարկացած նայեցին Պետիկին, վոր
կտրծեն նա յեր զինվորի մահվան պատճառը, ու փրնթ-
ինթալով հայնուցեցին:

Տիերսկու վերեկց ուսանող սանիստարներ բերող
ավտոմոբիլ յեկավ սպանվածին վերցրեց:

Նրան իսկունք պատգարակին (սասիկա) գրին ու
պատրաստիցին գնալու, բայց անկյունից մեկը նրանց
ձայն տվեց.

— Գլխարկը, գլխարկը վերցրեք:

— Գլխարկը մոռացել ելին: Հանկարծ բոլորին թվաց,
թե զլիարկն սպանվածի համար անհրաժեշտ ե:

Գլխարկը, վերցրեք գլխարկը, — բղավում ելին բոլոր:

— Վերցրեք զլիարկը, — ջղանորեն գոչեց Պետիկը,
գլխարկը...

Աւսանող-սանիտարն ավտոմոբիլից թռափ, գլխարկը գերցեց ու պատգարակի մեջ սպանվածի զլխի մոտ դրեց։ Այժմ ամեն ինչ կարգին եր։

Ավտոմոբիլը գնաց ու շգիտես, թե ինչու նրա սիրտը թեթևացավ։ Այստեղ, ուր սպանվածն եր լնկած, քարերը մուգ գույն ելին սուացել ու փոսերի մեջ մարդու վախ պատճառող կարմիր լճակներ ելին կանգնած։ Մարդ չեր ուզում այնտեղ նայել, բայց ինչ վոր մի բան մղում եր նրան՝ ավելի մոտիկանալ և ուշադրությամբ նայել…

— Ո՞յ, ո՞յ, ինչքան արյուն ե գնացել, — տխուր ասաց մուգ, սաստիկ զգգոված կաշվե բաճկոնով ու գեղնագուշն տաք շարֆը վզով փաթաթած մի բանվոր։

Բանվորը ձեռքով շոշափեց շարֆը, մտածեց ու մտքի մեջ կամացուկ ասաց.

— Այս։ Ես ել եսպես։

Բոլորը լուռ ելին։ Ու ամեն մեկն իր մասին եր մրտածում ու աշքերն ուրիշներից պահում։

Դեղնագույն շարֆով բանվորը ճպրալով անշնորհք ծիծաղեց։

— Իսկ ընդհանրապես, աղքեր ջան, բանն ուրիշ ե… բուրդ ե։ Անպիտաններն իսկական տեղին են խփում։

— Բա եղ վճրտեղից ե, Ե։

— Ո՞վ ե իմանում, կտրից կամ հուրանոցից կլինի։ Ենտեղ նրանք մութ տեղը թագկացած են։

— Գուցե վոստիկանների դարպաններից են։

— Զե—Ե, — կտրիցն ե, պնդում եր Պետիկը, — յես տես, կտրիցն եր։

Բոլորը հետաքրքրությամբ նայեցին նրան. եղ աղեն չինի թե մեռած զինվորի կողքի հետ ե պառկած։

— Հը՛ ինչպես ե, ընկեր, չինի թե հոգիկ կլնկներից ե, — հարցրեց արյան մասին խոսող բանվորը, — գուցե քեզ հիմա բի՛զ ե պետք։

— Ի՞նչ բիզ, ինչու համար, — զարմացավ Պետիկը։

— Իսկական բիզ, ի՞նչ բիզ։ Հոգիկ կլնկներիցդ քանդելու համար։

Ամբոխի մեջ թեթև ծիծաղեցին։ Պետիկն իսկույն կարմրատակեց ու նրա զեմքն ամոթահար դարձավ, զոր տարիքավոր ու բեխավոր զինվորը խոժոռաված տաց նրան։

— Այ տղա, դու իզուր ես մտել ալստեղ։

— Ինչու յե զուր։ Ինչու, յես ել քեզ պես քաղաքացի շեմ։ Եղ նույնիսկ զարմանալի յե, — զրգոված, վիրավորված ու իսկական յերեխայի պես վրա տվեց Պետիկը։

Զինվորը լոեց ու լուռ, արհամարհանքով թքեց այն կողմը։

— Թյու, հա…

Հետո դարձյալ խոժոռաված նայեց Պետիկին։

— Քեզ ծնող չունիս ախաղերս։ Այ թե ինչ կասեմ։

Բայց այստեղ Պատիկին պաշտպանեց բարձրահասակ նիհար ու մուգ զլխարկն աշքերը քաշած մի բանվոր։

— Ի՞նչ ես կպել զրա լախեն։ Քեզ ինչ՝ եկելե—եկել նատ լավ ել արել ե։ Նա ինձնից ու քեզնից ինչոք ե պակաս։

Բանվորը խոսում եր բարձրածայն ու առույգ ետաքանալու համար վեր վեր թաշում, ջղայնորեն ձեռքերն իրար խփում, իսկ հրացանն ուսն եր զցել։ Հանկարծ նրբանցքի զլխին սաստիկ հրացանածզություն սկսվեց։ Այստեղ ըոլորը ցնցվեցին։

— Գը՛ռ, զը՛ռ, — հանկարծ տների յետերից թնդաց ու միանգամից ինչ վոր մի մոտիկ տեղ սուր սուլեց, կարծես կողքիկ լիներ։

Այդ հանկարծակի բանից Պետիկը վեր թռափ։ Նոտեսավ, թե ինչպես հեռավոր անկյունում կարմիր տան պատը փլչեց, կարծես թե սալահատակի վրա շուռ յեկավ։

Զինվորներն ու բանվորները, նրանց յետելից ել Պետիկն անկյանից խմբովին փախան նրբանցքով առանց հասկանալու, թե ինչ է պատահել: Բայց հետո մեկիկ-մեկիկ կանգ առան:

Թևդանոթներից են խփում, — զոռացին հակառակ անկյունից: — Զգո՞ւշ, ընկերներ:

— Գըս, գըս, — փրոտաց նոր զարկը:

Բոլորը նորից վախեցան, բայց իսկույն ուշըի յեկան, ասես յերկրորդ զարկը հանգստացրեց նրանց, ու վերադան դեպի անկյունը:

Ախոտնիում հրացանի զարկերը սուր ու հաճախ փռուում ելին:

— Հարձակվո՞ւմ են: Գալիս են... — մեկը ձայն տվեց բռսամուտներից:

Բոլորը շփոթվեցին: Անկյունից հինգ զինվոր Տվերուկով գեմուղեմ վերև վազեցին: Նրանց յետելից, կոշիկները բարձր քրթքրթացնելով, վազեցին բասվորները: Մնացածները սկսեցին փողոցի մեջ հաճախ փաթեթներով անսպատակ փառմանուշտ կրամկել:

Բոլորն սկսեցին, ականջ դնել: Աղմուկը գնալով պարզվեց:

— Ճիշտ ե, ճիշտ, ավտոմոբիլ ե: Հապա, տեսնենք....

Ու բոլորը միանգամեց սիրտ առան, ուղղակի հավաքվեցին անկյունում ու հրացանները պատրաստ պահեցին:

Ախոտնու անկյունից գուրս յեկավ բեռնատար ավտոմոբիլը, վորի վրա նստած ու կանգնած կապույտ և մոխրագույն շինելավոր զինված մարդիկ ելին դնում: Հրացաններն անկարգ ցցված ելին ամեն կողմ: Սողացող վազք ե. հրացանները, զլուխները, ձեռքերը, կապույտ ու մոխրագույն շինելներն ասես ծագիկներ լինեն: Ավտոմոբիլը դեպի մյուս անկյունն եր սողում, ուզում եր թագուցիչը:

Պետիկը, բանվորներն ու զինվորներն իրար կողքին ստեղով, նշան բռնեցին ու համազարկ ամիս ավտոմոբիլին: Ավտոմոբիլը ցնցվեց ու կանգ առավ, սպիտակ հեղուկը ցալտեց ժերենալի միջից. մարդիկ ջղաձգորեն կուչ յեկան ավտոմոբիլի վրա:

— Վայ — այ... Պետիկի կողքին հանդիսավոր կերպով բղավեց վոչ-մարդկացին մի ձայն:

Ու բղավոցը բոլորին ցնցեց: Զինվորներն ու բանվորները թռան սալահատակի վրա և այնտեղ խումբ խումբ կանգնած, վտանգի մասին մտածելով, սկսեցին կրակել ավտոմոբիլի վրա: Հարեւն անկյունից ելի զինվորներ, ելի բանվորներ վրա վազեցին բոլորն ել տաքացած ու ջղաձգորեն կրակում ելին: Պետիկը տեսնում եր, թե ինչպես ելին այնտեղ մարդիկ կծիկներով թափում սալահատակին, ավտոմոբիլի հատակին ու ջղաձգորեն կուչ գալիս, աշխատելով թագնվել անիվների յետեն ու ավտոմոբիլի կողքերը, տեսնում եր, թե ինչպես ելին ավտոմոբիլի փայտե կողքերից պոկված տախտակները թռչում: Ու չճաշակած մի թռնդ ուրախություն խեղդում եր նրան: — Զարկ, խփիր գրանց, — բղավում ելին այստեղ մոտիկից: — Զարկ, — բղավում եր Պետիկն ու առանց շունչ առնելու կրակում եր, հազիվ կարողանալով հրացանը լցնել:

Անցավ մոտավորապես մի ըռպե, — ավտոմոբիլը ջարդված կանգնած եր. ու այս վոչ վոք չեր շարժվում վոչ ավտոմոբիլի վրա, վոչ ել նրա մոտ:

Ուժեղ թափով առաջ ելին գնում: Հաղթությունից տարված հանդուզն նայում ելին: Հետաքրքրությամբ նայում ելին ավտոմոբիլին... լուս ե ու մեռելություն: Ուղղակի...:

Կրակ եր թափում:

Իսկ բոլորը նայում, սպասում ելին, թե վերջն ինչ ելինելու: Անկյունից կարմիր տան յետելից, գուրս պարզուցիչը:

վեց . մի ապիտակ զրոշակ՝ կարմիր ու լախ խաչով, ձռղի վրա՝ վեր ու վայր, վեր ու վայր ծածանվեց, դուրս յեկավ մայթի վրա ու կաշվե թեվավոր սի ձեռք յերևաց, վոր զրոշակը բռնել ու ճոճում եր: Յերկար ժամանակ, թերեւ մի ըոպե, ձեռքը ճոճում եր: Անկյունից դուրս յեկավ կաշվե բաճկոնվ մի աղջիկ,—խաչը թեփ վրա, ու սպիտակ կասին կեն զլխին: Աղջիկը գնում եր գեպի ավտոմոբիլն ու զրոշակը գլխին բռնած տանում եր: Ահա զրոշակը զրեց ավտոմոբիլի կողքը, շուրջը ման յեկավ կունալով ակների վրա, վորոնց մոտ խառնիճաղանձ կույտեր եցին թափված՝ ասես մեշոկներ լինելին: Աղջիկը մեկ կույտից մյուսին եր կունալում, ձեռքով շոշափում եր նրանց և հետո դանդաղ անցնում եր

Իսկ այնտեղ. շունչը պահած, բանվորները, զինվորներն ու Պետիկը լարված նայում ելին նրան:

Աղջիկն իսչ վոր կանչեց ու ձեռքով արագ: Անկյունից սրբնթաց քայլերով ու թեները փաթաթած յերկու զինվոր դեպի ավտոմոբիլը գնացին: Ի՞նչ վոր մի բանի վրա կուացան, հետո մեկը մեջու դեմ արեց, մյուսը շինելավոր մի անձունի մեշոկ, վորի ներքեռում կոշիկները ճոլողակ ելին լինում, վերցրեց ու դրեց առաջինի մեջըն: Ու այսպես նրանք սկսեցին սպանված երին ո անել...

Նրանց գետնիցն եին հավաքում, ավտոմոբիլից ելին դուրս քաշում, մեջքներին դնում, ու կուզե կուզ քարշակալիս անկյունը...:

Գլուխ:

Հեռավոր անկյունից կրակեցին Ու այստեղ բոլորի վրայով հասառություն ու լարվ ծություն անցավ: Բոլորն ել հրացանների փակիչները շրխշիսկացրին ու առաջ շարժվեցին: Աև ու սուր մորուքով սի զինվոր շտապով մոտեցավ անկյունին և հապճեպ ասաց.

— Այս ըոպեիս հարձակում ե, ընկերներ պատրաստվեցնք:

— Հարձակում ե, — ինքն իրեն ասաց Պետիկը, — հարձակում ե:

Նրա սիրաց դողաց: Նա այս ու այն կողմն ընկապութագնվելու տեղ եր վնասում. վորովնետե կարծում եր, եր, թե հարձակվել՝ նշանակում ե անպատճառ շարքերով դնալ:

— Մերոնք բակերից պառւյտ են անում: Հենց վոր հրացանաձգությունն սկսվի, մենք... Բայց խոսքը չվերջացրեց: Այնտեղ, անկյունում, հրացանաձգությունը միանգամից բռնկվեց: Զինվորը փողոց թուավ ու մայթի վրայով, առանց յետենաւելու, դեպի Ռիոտնին վազեց: Պետիկը վախեցավ, «Կեցցե» բզավից ու վազեց նրա յետեվից: Յեվ իսկուն հասավ: Մեկը բոլորից առաջ, զլուխ ջարդելով վախչում եր, իսկ նրա զեմ ու գեմ մի տաք բան եր գալիս գուցե ոգ եր, գուցե գնդակներ ելին, ու բռմին վոռնում եր ականջների մեջ...

Նա միայն անկյունում կանգ տռավ, կարմիր տան մոտ, ու տեսավ, թե ինչպես Մօխովուց կապույտ ու մոխրագույն շինեներ են փոխչում, ու կարողացավ յերեք անգամ նրանց յետեից կըտկել:

Հուզված ու հանդիսավոր կերպով նա բարձրացավ ոխոտնօրյագույնի յեկեղեցու պատշգամբը, վոր այնտեղից ավելի լավ ու հեռուն տեսնի: Ռիոանի բյագը, թատրոնական հրապարակն ու հեռու փողոցը բոլորն ել դատարկ ելին:

— Ցունկերները զայս են. — հանկարծ ինչփոր մի անկական ձայն սուր կանչեց յեկեղեցու յետեից:

Ու այն ըոպեիս յեկեղեցու չորս բոլորն ու փողոցում հաճախակի զարկեր վորոտացին:

Ամբոխը ճշաց ու փախավ: Յերեխաները վայր ելին ընկյուն, փախչում ու չորեքթաթ սողում դեպի խանութները:

Ամբողջ մարմսով դողալով, Պետիկը փորձեց նայել, վաղ տալ-անցնել Տվերսկու անկունը, բայց հազիվ եր դուքս յեկել յեկեղեցու յետեկց, վոր զարկերի տակ ընկավ ու վիրավորված՝ վայր զորվեց: Նա տեսավ, վոր հարեան աների գոներից մեկ մեկ ու խմբերով յունկերներ, են վագում հրացաններն ուսմերից կախ ու բոլոր հարեցան տանիքներում հրացանավոր մարդկանց գեմքեր են յերեւմ: Պետիկին թվուն եր, թե տանիքներում բոլոր թագկացած սարգիկ ուղղակի իրեն են նշան բռնում: Նա յետ փախավ յեկեղեցու պատշգամբը, պատի տակ պահպերու:

Յունկերի հարձակվելուն ուսանողներն ել համառ կրակում եին բանվորների ու զինվորների վրա: Յեկեղեցու անկյունի մոտ, մայթի կեղտոտ ու աշնանային ցեխուաստիերին արգեն մի քանի մարդ եին ընկած, վոր ջղաձգորեն կուչ եին զալիս ու կանչում, իսկ վայր գցած հրացաններն ընկած եին նրանց կողքին: Մի քանի զինվոր պինդ կպել եին յեկեղեցու պատերին ու կրակում եին յունկերների վրա: Իսկ նրանք շղթա-կազմած՝ ուղղակի վրա եին տալիս զինվորներին:

Պետիկը կարծես կիսախուփ աչքերով տեսավ, թէ ինչպես յունկերները նիզակների հարվածներով ծակում եին զինվորներին, իսկ նրանք վայրենաբար ճշում, խըսրուում եին ու փորձում ձեռքերով քանի նիզակները, կամ յերկու քայլի վրայից իրենք եին կրակում յունկերների վրա:

Սոռանալով, վոր դեռ ելի կարելի յե կրակել ու դիմադրել, Պետիկը կպավ պատին ու սառը քարերից պինդ բռնեց: Սարսափից լայն բացված աչքերով նա նայում եր յունկերներին, վորոնք իր ներկացությամբ զնդակահարում եին հարձակվող զինվորներին ու բանվորներին ու թուացած սպասում եր: Յերկու զինվոր ուղղակին մոտից անցան: Վազ տալու տեղը մեկը հրացանը քաշեց ու Պետի-

կի գլխին նշան բռնեց: Պետիկը պարզ տեսավ նրա մռայլ ու կոր աչքերը: Վաս կրակը փայլեց: Բայց Պետիկը կրբակոցը չլսեց:

Թարգմ. Հար. Պետ. յեվ Գար. Հակ.

Ա. ԴՐԱԳԱՌԱՅՁԵՆԱՑ

Բնագոր

— Պարոններ, մի շատ լուրջ խնդիր: Գոների մոտ պահակ կա:

— Այո՛, պարոն կապիտան, — ուս ուսիւմում և Նիկոլայինը:

— Շատ գեղեցիկ: Դուռն ամուր փակեցեք:

— Պատրաստ ե, պարոն կապիտան:

Կամագորների կիսավաշտը — յունկերներ, զիմնազիստներ, ուսանողներ — խմբվում ե շտաբս-կապիտան Շաշինսկու շուրջը:

— Պարոններ, դոք զիտեք, վոր կարմիրները 35 զերստ հեռավորության վրա յեն: Հրտմանատարությունը վորոշել ե բազաքը հանձնել: Տեղահանությունն արդեն ավորուված ե: Այսոր առավոտ տեղահանության պետք ե յենթարկել ամբողջ բանտը: Մենք և ուսւչեխական գնդի մեկ վաշտը նրա պահակն ենք կազմում: Յես պահակի պետն եմ: Սակայն, ինչպես տեսնում եք, տեղահանությունն այսոր գլուխ չեկավ: Պատճառը շատ պարզ ե և ասարձակ: յերկաթուղային բանվորները հրաժարվեցին զընացքներ տալ այն պատրիմակով, թե պիտանի շոգեկառքեր չկան: Իսկ այն ել, վոր կա՛մ աներաժեշտ և նորոգման յենթարկել, վորովհետեւ ճանապարհին կարող ե խորհակուս տեղի ունենալ:

— Սըիկաններ...

Գնացքներ, իհարկե, կը տրամադրվեն, — շարունակեց շտաբս-կապիտանը, — կազմված ե յերկաթուղային ռազմադաշտացին գատարան, Յերկաթուղայինները համառելու դեպքում կը գնդակահարվեն՝ ամեն մի տասից-մեկը:

— Խելոք ե մտածված: Հենց դրանից ել պետք եր սկսել:

— Սակայն խնդիրը շտապ ե և սպասել հնարավոր չե: Կարող ե պատահել, վոր հետո մենք այլ ևս չկարողանանք ոգտվել գնացքներից: Կարմիրները չափազանց արագ են շարժվում: Զորակոչվածներն ամբողջ զնդերով են հանձնվում թշնամուն: Այսոր քաղաքի վրա բուշեիկական աերոպլանը կոչեր եր շաղ տալիս: Շատ հավանական ե, վոր գաղը գիշերը՝ նրանք քաղաքը գրավեն: Ի՞նչ անենք մենք կայանավորներին: Մեր իշխանությունը, «համաժողովրդականը», — շտաբս-կապիտանի դեմքին արհամարհական մի ժպիտ յերեաց, — փախուստի լե տվել գեռ յերեկ, Ուչըբդիկայի և վոչ մի անդամ չթողնելով այստեղ: Ճիշտն ասած, այդ կարենոր ել չե, վորովհետեւ փաստորեն նրանց որով ել իշխանությունը մեր ձեռքին եր գտնվում: Կալանավորներն ամբողջապես մեր տրամադրության տակ են, սակայն՝ յեթո մեզ չհաջողվեց տանել նրանց այստեղից և կամ թե՝ վորեն այլ կերպ «փակել» նրանց հաշիվները, ապա մենք — լես և ամբողջ պահանը պատասխանատու յենք զորահրամանատարի, գեներալ Ն. ի առջև: Իսկ կալանավորներ՝ թիվը յերկու հազարից ավել ե, բոլորն ել կարենոր հանցագործներ են. կարմիր բանակալիններ, բանվորներ, զյուղական «խորհուրդչիններ»: Թե՝ ինչ անել, պետք ե վորոշել անհապաղ:

— Յես սեկ յերենի ծրագիր ունեմ: Ճիշտն ասած, լես ձեզ հենց գրա համար ել հրավիրել եմ, պարոններ:

Ողակն ավելի սեղմվեց:

Շտաբս-կապիտանն սկսեց հրամանի յեղանակով:

Յերեկ գիշեր բանափ դիմացի բաղնիսում գնդացիներ են գրված: Նույն գիշերն ել բաղնիսը հեռախոսով միացված ե բանափի խոհանոցի հետ: Ծրագիրն այս ե. բանափի վերահսկիչներից մեկի սիջոցով կալանավորներին մենք տրամադրում ենք ինքնազաման մի փորձ անելու և հենց ազդ պահին փակում ենք նրանց հաշիվները: Առաջին հերթին, իհարկե, այն հարցուրքսանինը: Զեխերը նախազգուշացված են, վոր բանտում ապստամբություն ե պատրաստվում: Հարկավոր պահին նրանք կը լինեն բանափի պարբուների տակ: Ցուցակն և կամերաների համարները հանձնում եմ յունկեր Նիկոլինին, հետո կը ծանոթանաք:

Պատրաստ ե, պարոն կապիտան, բայց՝ ներողություն, ձեր ծրագիրն անիրագործելի յե, — ասաց Նիկոլինին ընդունելով ցուցակը:

— Ինչպես թե՝ անիրագործելի յե:

— Այո, պարոն կապիտան: Յես արդեն տեղեկություններ եմ հավաքել: Նեղափոխության ընթացքում նոր ընդունված վերահսկիչներն անհուսալի յեն: Հներին ել կայանավորներն ատում են: Նրանցից շատերը նստած են յեղել այս բանտում ինքնակալության որով, ճանաչում են, վերահսկիչներին նրանց անցյալ գործունեյությունից: Վաչ, պարոն կապիտան, ձեր ծրագիրն իրագործելի չե:

Բայց նա պետք ե իրագործվի, պարոն յունկեր: Յես այդ մասին շատարից կտրուկ ծրագիր եմ ստացել:

— Լսում եմ, պարոն կապիտան:

Տիրեց յերկարատեւ լուռթյուն:

Սակայն՝ ում: Ո՞ւմ ուղարկենք: Յեթե մեղանից մեկն ու մեկը գնա .. կատարյալ խալտառակություն կը լինի... չեն հավատա, — ընդհատեց լուռթյունը Շեշինսկին:

Պարոն կապիտան, բայց չե վոր մենք պահակներ ունենք նաև զ բակոչվածներից: Ահա, կարելի յե նրանցից մեկին, — առաջարկեց մեկը:

— Այդ լավ միտք ե, — բացագանչեց Նիկիտինը, — ուրինակ, նրանցից մեկը միշտ ինձ հետ միասին ե պահակ կանգնում... Աղջանունը Բոնդար ե....

— Իսկ նա վատահելի՞ յէ:

— Չեմ կարող վոչինչ առել, պարօն կապիտան: Բայց նա կատարյալ ապուշ ե, զյուղացի մի անասուն: Նրա խելքը յերբ էք չի կարող բան կարել: Յեվ վոր գլխավորն ե՝ նա բոլորովին չի ուզում հայրենի գյուղից Սիբիր գնալ: Յեթե ասենք, վոր մենք ել ենք ուզում մնալ այսանդ և այդ պատճառով... մի խոսքով, յես նրան լավ եմ ճանաչում... թողեք վոր յես խոսեմ նրա հետ:

— Միայն անհրաժեշտ ե, վոր նա փոքրիկ կառակած տնգամ չունենա...: Դուք յերաշխավորում եք:

— Այս, խսկույն և յեթ:

— Պարօններ, հարցն սպառված ե: Առաջարկում եմ բոլորիդ լինել ձեր զիբուրում: Վճռական բոպելին մենք բոլորս դուքս կը գանք բանտի պատերից: Միայն մեկը կը մնա խոհանոցում—հեռախոսի մոտ: Այդ կը լինեք դուք: Հասկացաք: Իսկ այժմ՝ դեպի զիբուրը, պարօններ: Ժամանակը չի սպասում:

— Այդ վատ չի լինի, հա, հա-հա, — լովում են ձայներ և ծիծաղ:

— Նպատակն արդարացնում ե միջոցները, — խորիմասորեն արտասանում ե անբեխ զիմնազիստը:

— Յունկեր Նիկիտին: Զմոռանաք առել, վոր ձեզ այդ Բոնդարը կալանավորների հետ խոսելիս «ընկեր» առի նրանց: Առանց այդ տխմար խոսքի նրանց մոտենալու միտք ել չունենաք:

— Լսում եմ, պարօն կապիտան: Յես դիտեմ, թե ուսակորեն ինչպես պիտք ե խոսել: Յես կարող եմ: Կես ժամից յես կը զեկուցեմ ձեզ հետեւանքի մասին:

— Այս: Դեհ, գործեցեք: Զմոռանաք՝ «ընկեր»: Այնպես վոր ամեն ինչ ընկերական լինի: Հա-հա-հա...: Թող երն-

կերը՝ նրանց համար անցագիր լինի գեպի «Դուխոնինի շտագիր»:

— Յես ձեզ հետ մասլահաթ պիտի անեմ, Բոնդար ախաղեր. մի շատ լրջավոր գործի վրա. — սկսեց Նիկիտինը «ռամկաբար» խոսել:

Դեմքը ըութ, քնառ և վոչինչ չարտահայտող:

Դիմակ: Այդպիսի գեմքեր ունեցին ցարտկան զինվորները, յերբ նրանք՝ խեղճացած փայտահարվածի կարգապահութիսոր՝ անզոր ելին և չարացած:

Սակայն ներքուստ վանյան լարվեց: Պահակալին ծառարության լերկու շաբաթի ընթացքում նա ընտելացավ բանստային կյանքին և շատ բան հասկացավ: Զարհուրելի և սարսափելի բոլշևիկներն ամենասովորական մարդկիը դռւրս յեկան, — բանվորներ, գյուղացիներ: Այդ մեծ նորություն եր նրա համար: Իր ամբողջ 18-ամյա կյանքը վանյա Բոնդարն ապրել եր հեռավոր Նիլովկայում—ամբարի տակ: Մեկ թե յերկու անգամ պատահել ե՝ ընկել եր մեծ նովինո գյուղը—Նիլովկայից 10 վերսա հեռու:

Նովինոյից հեռու վոչ սի տեղ չեր յեղել, իսկ քաղաքի կյանքի մասին ուներ ամենափանոտատիկ պատկերացումները: Այնտեղ վաղուց ե, վոր ինչ վոր «պատերազմ» եր տեղի ունենում: Յերկու ամիս առաջ իրանց նահանգում յերեացին ինչ վոր «չեկաներ» և նրանցով ել պատերազմն սկսվեց: Շուտով «չեկաներն» յեկան սինչի Ներովկա, Վանյալին ել ժողովրդական բանակի զինվոր առարն և ուղարկեցին նահանգը: Այս որվանից թե խրամատացին աշխատանքներում, թե պարապմունքների ժամանակը, և թե զորանոցներում, — ամեն տեղ վախեցնում եցին բոլշևիկներով, պատմում ելին զարհուրելի բաներ նրանց պազանությունների մասին, խոսում ելին զերծանացիների և ջնուղների մասին, վորոնց հետ բոլշևիկները բարեկա-

մացել են՝ ոռւս ժողովրդին հակառակ։ Վանչան և հավատում եր, և չեր հավատում։ Այդ բոլորն ել նրան թվում եր անհասկանալի, ուսար և անպետք։ Նիլովկալի կարուն եր քաշում, ուզում և լերազում եր նորից թոքախտավոր հար հետ ամբարի տակ աշխատել և լարոտում եր իրիկնախաղերն ու աղջիկներին։

Բոլշեկիկներից վախենում եր այնպես, ինչպես վախենում են տնավոգիներից և անտառավոգիներից։ Ուղում եր, վոր ինչքան կարելի յե շուտ վերանան նրանք աշխարհի յերեսից։ Բայց յերբ վոր տեսավ նրանց բանափ բակում զբոսաժամին, վախն ինքն իրան վերացավ։ Այժմ վանյան շատ հաճախ եր ծիծաղում ինքն իր վրա։

Առաջ նա բոլշեկիկներին չեր սիրում նոր պատերազմ սկսելու պատճառով։ Այժմ կամավորների և կալանավորների հետ զրուցելու հետևանքով հասկացավ, վոր մեղափոր են թե սրանք և թե նրանք։ Իսկ հետո ինքնին առաջ անցավ և մի ուրիշ հարց, այն ե, թե՝ ո՞վ ե ավելի շատ մեղափոր։ Դրան պատասխանեց, թե՝ ամենից շատ չեխերն են մեղափոր։ Յեթե չեխերը չլինելին, վոչինչ ել չեր լինի։

Անտառում մոլորվածի պես եր թափառում վանչան իր նոր կյանքի մեջ, և միայն մեկ միտք եր հանգատացնում նրան։ Վոր ինքը վոչ մի հաշիվ չունի այդտեղ, վոր վոչ սրանց հետ և վոչ ել նրանց, Կատարում եր իր ծառայության պարտականություններն այնպես, ինչպես կատարում ելին նույն բանը փախտի բռնության ներքո հազարափոր զորակոչված ժողովրդաբանակալինները։ Ըայց նա յեր բերում կալանավորների համար մախորկան, զրնում եր նրանց ուզած մթերքները, իսկ մեկ անգում ըանգորներից մեկի կողմից մի գրություն տարավ նրա ընկերներին՝ յերկաթուղարին արհեստանոցները։

Բանվորը շնորհակալություն հայտնեց և ասաց.

— Դե, տես, հա, դյուզացի. զգուշ կաց, վոր ու

բանվես թղթի հետ միասին։ Դու մեզ հարկավոր ես, կողնես ճանապարհին, յեթե քան ե՝ տեղահանությունինի։

Ամենից շատ վանյան տեղահանությունից եր վախենում։ Նա բոլորովին չեր ուզում Սիբիր գնալ՝ նիլովկալից հազարափոր վերստ հեռու։ Սկզբումնազարդացած եր բուշկիկների գեմ—վոր մոտենում ելին բաղաքին։ Թնդ բըշելին ելի։ Այն ժամանակ տեղահանություն ել չեր լինի։ Բայց յերբ վոր բոլշեկիկներն սկսեցին մոտենալ և Վանյան տեսավ, թե ինչպես են փախչում բուրժույները և ուրախանում՝ բանվորները բաղաքում և կալանավորները—բանտում, ինքն ել նրանց հետ սկսեց ուրախանալ… գոնե շուտով գային… թնդ փախչեն՝ գնան բուրժույները, ես-երները, չեխերը և կամավորները…։

Սակայն, ինչու համար նա պետք է փախչի Սիբիր։ Բոնդարն ուզում եր, վոր ամեն ինչ այնպես դասավորվի, վոր ուժ պետքն ե՝ վեր կենա և գնա, իսկ ինքը մի կերպ մնա իր տեղում։

Բայց միթե կամավորները կը թողնեն, վոր մնա։ Կը տանեն։ Անբացարելի ատելություն և չարություն ել ըցվում Բոնդարի սիրտը ևնա, կկոցած աշքը բցած լունկերի վոսկեզոծ ուսնոցներին, մտածում ե։—

— «Ինչ ե ուզում ինձանից այս հոպոպը»։

— Դուք լանւմ եք ինձ, ախակեր չան։ Եսպես բաներ ելի…

Կարծես թե այսպես ե—Նիկիտինը կարգացել եր գրողների մոտ խոսում ժողովուրդը։

— Բանան ենպես վոր, հրամայված ե տանել։ Յես ու զուք ել հետները գնացող ենք՝ մինչև Վլագիվաստոկը, ովկիանոսը, յապօնների մոս։ Սիբիրում զուլում ցրաեր են… իսկ «խեղճերը»—բորիկ են, տկլոր են, չփլախ են… չը։ Մեկ ել վոր—Սիբիրում իշխանությունն ել ուրիշ ե։—

միապետկություն ե: Բոլոր բռնավորներին միապետկությունը կը խփի: Մեսնելու յեն գնում: Մեզ համար ել, ասենք, հարսանիք չի լինելու, մենք ել հո միապետկություն չենք ուզում: Բոլշակների գեմ մենք կույիլ ենք, վոր Հիմնավորականի—ժողովրդական իշխանության—համար: Հ՞ր: Նիկիտինը փորձող հայացքով նայեց Բոնդարին:

— Յեսիմ... ինձ չեխերի են զինվոր տարել,—խուսափողական պատասխան տվեց Բոնդարը և վոտրից վոտր փոխելով, բնատ և անտարբեր նայեց Նիկիտինին:

«Ել ինչո՞ւ յէ լեզուն կոտրում զուր տեղը: Զարմանք բան ե», — մտածում եր Վանյան:

«Կատարյալ ապուշ ե», — ներքուստ ժպտալով մտածեց Նիկիտինը:

— Ուրեմն հսպես բաներ ելի... եստեղ հաճաք-մասխարություն չի՝ յերկու հազար ու կես մարդ կա, զրանցից շատերը անշառ, անմեղ մարդիկ են և սկի յերբեք ել բոլշակ չեն յեզել, հենց ենպես, մի կտոր հացի համար ընկել են կարմիր բանակը: Ընչե՞ պիտի զուր տեղը գնան կոտորվեն: Հ՞ր: Ուզում ենք նրանց ել ազատենք, մեզ ել... Սիբիր չենք ուզում: այլ ուզում ենք մնալ եստեղ և վոր նրանք ել ազատ ման գան... Հ՞ր:

«Խարսմ ե, թե՝ չի խարում: Ասենք՝ ընչե՞ պիտի խարի»... Վանյան ուրախացավ:

— Բա եղ վոնց պիտի անեք, — հարցրեց:

— Այ, եսպես... եղ զուր կանեք, ախալեր ջան, թե չե՝ մեզ չեն հավատա, մեր կամավորները լավ չեն վարվել, լսամուտների վրա կրակել են: Որինակ՝ յես ել: Ե, ի՞նչ կարող ես անել՝ որենք ե ու կարգ ե... իսկ զուք չէք կրակել...

Զե, ստում ե», — մտածեց Վանյան, և նրա աչքերը բից մարեցին:

— Ախք, յես ի՞նչ ունեմ, հենց մեկ բերդանկա... ի՞նչ կանես գրանով... մեջն ել մեկ վասմուշ:

— Յեզ զուք ի՞նքներդ ել զուուղից եք զորակոչված: Զեզ կը հավատան: Դուք խոսել եք նրանց հետ, են բանվորի հետ, ձեռքը կտրած ծերուկի հետ: Ասեք, յեթե ուզում են՝ թող դուրս գան: Մենք բան չենք տսի: Ենքան ե, վոր բարեխոս լինեն մեզ համար բոլշակների առաջ: Թե չե՝ կը գան ու կը կոտորեն մեզ ել, ձեզ ել: Թող ասեն, վոր, ուրեմն, մենք նրանց աղատել ենք բանախց: Մենք ել հսպես կանենք. բաց կը թողնենք բակը և մենք կը գրնանք. շնորհը համար մի բուռպ զինվորներ կը թողնենք: Թող զինաթափ անեն պահակներին ու գնան: Հեռախոսն ել թող կտրեն, վոր չեխերին իմաց տվող չինի: Հասկացա՞ք:

Բա մեր բանը վոնց պիտի լինի:

Կը պահվենք նկուզներում ու կարցերներում: Բոլշակները վոազ-վոազ բշում են գեպի քաղաքը. շուտով եստեղ կը լինեն: Յեկան թե չե՝ մենք ել դուրս կը գանք: Պետք և շտապել...:

— Բա ել մեր ենք բաց թողնում... Սպասենք՝ թող գան ելի....

— Զի կարելի. բանն ել հենց եղ և ելի... Զեխերը կիմանան, վոր չենք տանում և կը կոտորեն մեզ ել, ձեզ ել: Իսկ բոնավորներին վոչխարների պես կը մորթեն: Նըրանց հգակես թողնել չի լինի. կամ պետք ե տանել կայարան, կամ բաց թողնել: Այ ձեզ մեր պահակների ցուցակը: Իսկ պահակի խրճիթի բանալին ել վերցրեք, թող ձեզ մոտ մնամ... Մենք ենտեղ կը պահվենք մինչեւ կարմիրների զուլը: Իսկ ցուցակը տվեք բանվորին, կամ 216-րդ կամերում, այսինքն՝ խրճիթում, մեկ կոմիսար կա նըրստած՝ նրան: Վորին ուզում եք՝ տվեք, նրանց մեծավորներից մեկն ու մեկին, ինքներդ տեսեք... Հասկացա՞ք:

— Ինձ ի՞նչ կա վոր. ուզում ես՝ հենց հիմա ել գնամ:

— Սպասեք... ուրեմն, վոնց պիտի ասեք: Շատ լավ... եղակես: Դե, զնացեք: Աստված ձեզ ել, մեզ ել, սրանց ել յաջողություն տա...:

Շտապեցնում ե վերահսկիչն։ Նրան թվուժ ե, թե վերահսկիչը դիտմամբ ե յերկար ժամանակ ուշանում յերկաթակուռ դռների մոտ։ Ուզում ե ինչքան կարելի յև զաւտ հայտնել կալանավորներին ուրախալի լուրը, քանի դեռ չեխերը չեն խուժել ներս և բոլորին սրի քաշեր։

Սիրտն այսպես ուրմի ե, Վերջապես այսպես ե լինելու, ինչպես Վանյա Բոնդարն եր յերազում։

Սակայն, անասելի հուզմունք ե պատում նրան, յերբ նա մտնում ե բանտի բուն սիրտը՝ «խաչը»։ Թվուժ ե, թե կանգնած ե մի հոկա գերեզմանի ծայրին։ Յեզ այս բռնոր բոլշևիկները՝ բանվոր, գլուղացի, նավաստի և կարսիքբանակային,՝ բոլորն ել արգեն մեռել են։ Իսկ նա կանգնած ե գերեզմանի ափին և յերկաթե բահով հող ե տալիս նրանց վրա։ Յեզ խուլ հնչում ե հողը, զարկելով յերկաթե դագաղի կափարիչին։

— Վերջ ի վերջո, յերկաթուզայինները վագոններ չեն տալիս, ելի, կալանավորների համար, — հարցնում ե հանկարծ վերահսկիչը։

— Ի՞նչ վագոններ։

— Դե, լավ, հա... Յես հո գիտեմ, թե ինչու յես յեկել... Յունկերն ալդ ինձ վաղուց եր առաջարկում, բայց կալանավորներն ինձ չեն հավատում։

«Ահա թե ինչ»...

Յերկաթակուռ սանդուխքներով բարձրանալով վերէ հարկը, կորիդորի վանդակապատ լուսամուտից վանդաստեսնում ե փողոցի մյուս կողմի շինությունը։ Զորբորդ հարկի լուսամուտներում սեին են տալիս վիզները յերկարացրած գնդացիրները, նաև լով դեպի բանտ։

«Ահա թե ինչ»...

Բանվորն ապասողական հայացքով դիտում ե։ Զեռքը

կտրած ծերունի գյուղացին վեր ե կացել թախտից և ուրալիք ժպտում ե։

— Ի՞նչ կա, գյուղացի ախպեր։

— Ըսկերներ, Զեզ հիմա գուրս կը բերեն բակը և դարպասը բաց կանեն Միայն թե՝ փախչելու միտք ել չունենաք։ Զեզ ուզում են կոտորեն բոլորիդ ել։ Դիմացի բաղնիսում գնդացիրներ են դրել... Պրովոկաց ե, ընկերներ։

Հաղորդում եր արագ շշուկով, շուտ-շուտ յետ նայելով, դեպի դուռը, վորի յետելին կանգնած վերահսկիչը՝ սպասողական զրնդացնում եր բանալիները։

Յերկաթուզայինները հրաժարվել են վագոններ տալուց, դրա համար ել ձեզ չեն տանում։ Կարմիրներն այս աեղ, քաղաքի մոտերքն են, յերկի գիշերս...։

— Է՞՞լ։ Ուրեմն, ազգել ե քո տարած թուղթը, գյուղացի ախպեր, — բանվորը ծիծաղեց և շփեց վանկալի թիկունքը։

— Վ՞որ թուղթը, — վախեցավ Վանյան։

Այն, վոր իմ կողմից տարար յերկաթուզային արհեստանոցները։ Ապա գու ի՞նչ ելիք կարծում։ Առողջաթիանս մասին ելի զրել։ Զե, ախպեր ջան, ժամանակը հիմա շատ լուրջ ժամանակ ե, պատերազմական և արյունալի որեր են...։ Հիմա արգեն պիտի մեկ կողմի հետ հավասար վոտքով գնաս... մի թուղթ ել կը զրեմ։ Աշխատիր անպայման հանձնել։ Լավ մտիկ տուր, վոր չըսնվես... Թե չե՝ վերջ քեզ ել, մեղ ել... կը տանեմ։

— Տուր... Շուտ արա, — վճռականորեն ասաց Բոնդարը։

— Ահա... Այնտեղ քեզ կասեն, կարող են, որինակ, վազն ել վագոններ շտալ, թե՝ չե։ Առավոտն ինձ կը հայտնեմ...։

— Բայց ինչպես հայտնեմ։

— Ահա թե՝ ինչպես։ Առավոտը ժամի շին յես գրուիս լուսամուտից կը հանեմ։ Յեթե վագոններ չեն տա

բղավիր ինձ վրա, իսկ յեթե կը տան՝ ուղղակի կրակիր։
Հասկացաք։ ԴԵհ, գնա հիմա։ Մենք արդեն բոլորին ել կը
հայտնենք։ Շնորհակալ ենք, ընկեր, վոր նախազգուշացրիր։
Բանվորն ամուր սերմեց Վանկայի ձեռքը։

— Շնորհակալ ենք, վորդիս։

Յեվ հանկարծ իր միակ ձեռքով գրկեց ծերունին Բոն-
դարին և պինդ համբուրեց։

— Քնա և աշխատիր բանվորական գործի համար։

Գիշերը յերկաթուղավրներին գնդակահարում ելին։

Իսկ Վանկա Բոնդարն ուրախ եր. շոգեկառքերը նորոգ-
ված չեն, բանվորները վազոնները չեն տալու։

Յեվ արդեն ավելի և ավելի մոտիկ ե ու յոելի թրն-
դանոթների վորոտը։ Առավոտան ծափալուն մառախուզի
մեջ մեծաղմուկ են դպրում կրակոցները։ Զաների ալիք-
ները զարկվուն են ամայացած քաղաքի քարաշեն պատե-
րին և առածվում քնաթաթախ վարդայի վրա։ Անոր-
փողան անտառների արձագանքը գեռ յերկար ու յերկար
ժամանակ է կրկնում թնդանոթների տնքոցները, վորոնք,
կարծես, ծանր քարեր լինին, վոր պլորվում են ցողաշաղ
և պաղած գետնի վրա։

Յեվ ամեն մի նոր թնդունից հետո դողում է սիրո
խոռվահուց խնդութիւնը և յերգում ու ճնշում են նրա
մեջ ինչ վոր նորոգ և անծանոթ լարերը։ Յեվ Վանքան
դառնում է ավելի մեծ, ավելի բարձր և ավելի ուժեղ։

— Բուռնես... ուխ... բանի... ախ...։

Ցուրաքանչյուր նոր պայթյունը մոռեցնում է յուրա-
լինների գալստան բոպեն։ Ցուրաքանչյուր թնդուն հա-
զարավոր ընկերների կյանքն է փրկում...։

Նիկիտինը շանթ ու հուր է թափում։ Նա պատրաստ
է տեղն ու աեղը շանսատակ անել ույլ ապուշին։

Զհաջողվեց...։

Սակայն այժմ այլ հս ուշ է զրա մասին մտածելը...։
Մի քանի ժամից ստիպված են լինելու փախչել և թողնել
այստեղ այդ շներին...։

Զհաջողվեց...։

«Սակայն, ինչու համար այսքան ուշանում է վերի
հարկի ծայրի լուսամուտակ բանվորը։ Գնդակահարված հո չե»։

Բոնդարը դիտե, վոր դիշերը բանտից 13 հոգու տա-
րել են։

«Ով դիտե՛ նրան ել են տարել»...։

Անհանգիստ նայում է լուսամուտին...։ Ահ, յերանի
թե նրան տարած շինեն...։

Նիկիտինը նկատում է Բոնդարի անհանգստությունը
և նայում է նույն ուղղությամբ։ Բոնդարն անցնում է խորքը,
վորպեսզի աչքի առաջ ունենա թե լուսամուտը և թե Նի-
կիտինին։

Ահա վանդակապատ լուսամուտում յերեսում՝ բանվորի
հուծված գեմքը, Վանկան դեռ ձայն չհանած՝ Նիկիտինը
հրացանը բարձրացնում է։ Լսվում է կրակոցը։ Միաժա-
մանակ, ձուլմելով առաջինին, լսվում է յերկրորդը + և յուն-
կերը, ձեռքերը թափահարելով, արյունլվա, փափում է ծաղ-
կանց ածուկի շորջը շարված քարերի վրա։

Ա. ԿՈՍՏԵՐԻՆ

Խշամությունը խորհուրդներին

Նախկին նահանգպատի տան դահլիճն է։

Մարգկային սառն ու սպիտակ սրուները լայն կիսա-
քանակ կազմած՝ շտապով վաղ տվին։ Վայելուշ, անբարբառ,
ու գանգրահեր զլսիկնորով վազ տվին ու կանգ առան։

Իսկ ոյուների զլսագերենում՝ ամբիոնը, ներքենում
նստարանները, սեղաններն ու աթոռները մարդկային
բազմածենն հօծ մարմինն է բռնել։

Այսոր վճռում են —

— Իշխանությունը Խորհուրդներին:

Մրուա գործարաններից ու հանքերից և հոտած գուլպաների ու վոջոտների գորանոցներից այստեղ են լեկել: Զորանոցների, գործարանների ու հանքերի կամքն են բանցայտեղ, այս ապիտակ պարունակարդ դահլիճը նետել ու կծիկ դարձրել:

— Դիմացիր մեր ցավին.

Պոկիր կոկորդը խեղդող գունզը.

Ֆաբրիկա-գործարանային, հանքային ու զինվորական կոսխտեների կոնֆերենցիա յե:

Նախագահում ե Ստեփան Շահումյանը:

Նա հանգիստ ե: Զղանորեն վճիռ ոռունգներն ու վերին շրթունքն են միայն դողդողում....

Զեկուցում ե Ալյոշան: Մագոտ դեմքով մի մարդ ե նա: Նրա թափ ու վորուացող ձայնը դահլիճի մի ծալից մյուսն ե թոշում, իսկ ինքը յետ ու առաջ ե անում ամբիոնի վրա: Նրա մագոտ ձեռքերը ինչ վոր մի բան ծանր կերպով մեկի բութ պլուխն են ճիշտում... Հանկարծ անկյունում մեկը բռնկվում ե.

— Դուք Ռուսաստանն ու հեղա իովությունն եք կործանում....

Կոնֆերենցիան աղմկում, սուլում ե: Սուլում են ամբիոները — զինվորների ու նախատիների շինեները:

— Բավական ե... Լսեցինք... Կորչեն բալշեիկները... Բուժուական շներ... մատնիչներ....

Շահումյանի սունգներն ու շրթունքները ձգվում են: Մուգ-կաթնագույն դեմքը սպրոդում ե: Վոչ, չի սպրդում, այ փայլում ե ու պարզում, անասելի հանգիստ ե....

Մի վայրկան նախում է կատաղի ու փրփրդեղ ալեկոծությանը... Քամին սաստկանում ե — փոթորիկ ե լինելու....

Մագոտ Ալյոշան զայրութով նայում ե նստարանից նստարան թոշող մարդկանց: Բառերը խեղդվում են նրա խիտ սեղմված ատամների արանքում:

Շահումյանը ձեռք բարձրացնում ե:

— Կամաց, ընկերներ...

Գործարանի ու զինվորական կոնժողների աղմկալից ծափերի տակ վորտեղից կարող ես ձայնը լսել:

Բայց նուրբ ձեռքը, վոր հարյուրավոր թելեր ամուր բոնած ունի, պարզվում ե գլխավերեսում ու վոաքի վրացված կոնֆերենցիան վընթթվընթալով խաղաղվում ե... Զանգահարում են — ու լուսթյուն ե տիրում....

Ամբիոնը նեղ ե ու խեղդուկ. Ալյոշան տեղից վեր ե թռչում: Նրա միտքը շեշտակի ծափալվում ե: Աղքատիկ ու անկենդան խոսքերով անհնարին ե արտահայտել նրա արդ միտքը:

Գետրեպոլի ու Մոսկվայի պրոլետարներն իշխանությունն իրենց ձեռքն են առել... Այժմ այստեղ մի շտեմափած կոփիվ ե: Միթե Բագվի բանվորները մենշեվիկան ու աջ հսկերների զառանցանքների մշում մեջ պիտի մոռանան իրենց ընկերներին....

Վոչ, դժգումած ու անպետք խոսքերով չի կարելի արտահայտել տարիներով հասունացած սպանիչ ցավը:

Մի վայրկան շունչը կտրվում ե, հոնքերի տակից նայում ե ներքեսում դանուզ կոնֆերենցիացին ու խռպուծայնը հնչեցնում:

— Իշխանությունը խորհուրդներին:

Կոնֆերենցիան ծառացավ, հարյուրավոր ձեռքեր ցցվեցին սղի մեջ ու լսեցին վորուշնդոստ աղաղակներ:

— Կեցցե: Իշխանությունը Խորհուրդներին: Կորչի...

Յերկրորդ զեկուցողը մենշերիկ ե: Ամբիոնից ու նստարաններից նրա զեկուցն ել նույնպես խեղդում են

ժամերով ու ազաղակներով... ժամերն իրար լեռնից
անցնում են...

Ամբիոնի վրա, սեղանի առջև նախագահը դարձյալ
առաջվա պես հանգիստ է: Միայն ուշնգներն ու շրթունք-
ներն են հաճախ գողգողում: Կաթնագույն դարկությունը
սրա դեմքից չի հեռանում:

Մենցիկները, աջ եսեներն ու դաշնակներն ամուր
և ուժեղ բլոկ են կազմել: Պակաս ուժեղ չեն նաև բաց-
շեկները: Բազմամարդ ու լեփուցուն ամբիոնները հա-
վանության թնդյունով են ճանապարհ զնում բարձրելու
ճառուխուներին:

Դրանից ե, վոր սպիտակ դահլիճն այդպես խեղուուկ
ե, զրանից ե, վոր կոնֆերենցիան ժամերով չարչարժում
ու շունչը կտրվում ե:

Եսերների լիդեր Աթարեկյանը մորուքն ե սեկում,
լայն ճակատից քըտինքը սրբում: Եսերների ու դաշնակ-
ների մոտ ե պազ տալիս ու նորից առաջին շարքերին
հասնում—ուզում ե բռնել այն թելերը, վոր բարձրելու
նախագահն ե ամուր պահել:

Յերկու բանաձե: Քվեարկում են: Հետևանքները՝
Բազշեկները—300, սոցիալիստական բլոկ—350,
մացածները ձեռնապահ են:

Վալրկենական լուսթյունը խանգարվեց:
— Կեցե... մեկ ել քվեարկեր... թող կորչի...
Նստարաններն ու աթոռները ճրճում, դղրդում են:
Սուլոց, ճիշեր ու անեծքներ...

Ստեփանը շվախեցավ: Կապուտակ աշքերը լայն բաց-
վեցին: Մոտեցավ նախարենին նուրբ ու բարձր հասա-
կով: Նրա մուգ-կաթնագույն դեմքը կանգնեց լեռացող
կաթուալի գլխավերենում:

— Ընկերներ...

Վոտքի կանգնած կոնֆերենցիան շունչը պահում ե:
— Ընկերներ, համարյա կոնֆերենցիայի կեսն ընտ-
ըություններին չի մասնակցել...: Տվյալ գեպքում արդ
համարոր ե յերկու բանաձեն ել շընդունելուն... սոցիա-
լիստական բլոկի առավելությունը 50 ձանով, չնչին բան
ե... Առաջարկում են ձեռնողան ընկերներից մի բանիսին
խոսք առլ...:

Բաձկոնավոր մի մարդ՝ նստարաններին քովելով՝ ա-
ղաղակում ե:

— Խոսք տուր... Աև քաղաքացիների կողմից եմ...
Սև կետի նման ամբիոն բարձրացավ ու զուխը
բացեց:

— Ընկերներ, մենք չենք կարող ձայն տալ վոչ մեկ
բանաձեին, վոչ միուսին: Վորովհետեւ մենք ինչացո՞ւ յենք:
Մեզ այսաեղ են ուզարկել, բայց չեն ասել, թե ումը ձայն
տանք... ասենք թե այս բազեին բացեկներին եմ ձայն:
տալիս կամ բլոկին, բայց գործարանում գլուխս կպոկեն...
Յես կարծում եմ, վոր այս հարցը պետք ե շրջաններում
ու գործարաններում քննել— ապա լուծել...:

Ստեփանի աշքերում ուրախության կալծեր են յե-
րեսում—պարզ խոսքերով յելքը գտնվել ե: Զեռը շարժեց,
մի քանի խոսք ասաց ու կոնֆերենցիան սեղմում ե
գոների մեջ—վորոշեցին մի շաբթից հետո նորից հավաք-
վել, իսկ այժմ շրջաններ ու գործարաններ պետք ե զնալ...:

Ամբողջ շաբաթը գործարանները միտինգների ելին
հավաքվում: Սուլիչներով բարձրածախ կանչում ելին, ծխի
խտացած քուլանները բաժու հետ պտտվում ելին...:

Մի ժամացատաւմ են, յերկու ժամ միտինգ անում...
Ու նորից գեպի սպիտակ սպոնսազարդ, ցուրտ դահլիճը,

ամբիոնները տրաքում են գործարանների ու զորանցների սահմարձակ ալիքի ճնշման տակ:

Նախագահության սեղանի առջև կաթնագույն-դալուկ մարդն և նստած: Ռունգներն ու շրթունքները դողողացին:

— Բնկերներ...

Թուզլ զանգահարում են:

— Սըս... սըս... կտժաց...

Անհավասար թնդունը նստարանների մեջ, ամբիոններն անցավ ու թագուցից սյուների յետել:

Յերակները ձգվեցին: Արյունը գլուխները տվեց... Որուծանը ե... Այս բոպելիս...

Պատքարը յերկար չտեղց:

Բայլշեիկ նախագահը, վոր ոռւնգները զողացնում եր, քաշած ցավը զիտեր: Կոնֆերենցիալի մարմի մեռած ու անպետք կտորները հանգիստ վարակում եր ու յետ շպրառում: Յետ շպրառները ճիշերով խեղդվում, շնչառապառ ելին լիսում....

Շահումյանի գեմքը մեկ սպրդնում, մեկ մթագնում ե: Մոտենում ե նախագահին.

— Քվեարկում եմ...

Բայլշեիկներն ստացան 730 թեր և 170 դեմ:

Բեմում գտնվողները շառաչյունով տրորում են նստարանները: Նստարանները ճրճում են —

— Իշխանությունը Խորհուրդներին....

Շարքերի արանքից մեկը գեպի նախագահությունն ե թոշում: Զեռքերն անոգնական թափահարում ե.

— Բնկեր, յես եսեր եմ, բայց գործարանն ինձ հրամայել ե բայլշեիկներին ձայն տամ... Յես ել ձայն տվի... Յես ինչ պետք ե անելի...

Ու յերկրորդը, յերրորդը... տասնյակներ...

— Գործարանը... միտինդը... ընդհանուր ժողովը...

ամբողջ շաբաթն ատամներով քրքրում ելին... հրամացին... ահավասիկ մանդատը...:

Իսկ նրանք վոր ախատես պատռվելով, տանջալից չանքերով յետ ելին շպրտված ամբիոնի վրա, իրենց լիդերին թողին հիստերիկական ծափերի տակ.

— Մենք չենք մանաշում... մենք պահանջում ենք... կոնֆերենցիալում մատ խաղաց... Արդ վորոշմանը մենք չենք յենթարկվում ու հեղափոխության Փրկության կոմիտե յենք հիմնում...

Կոնֆերենցիալի մազերը բիզ-բիզ յեղավ.

— Դուրս կորեք... գարշելիներ... լակեյներ... մատնիչներ...

Իսկ բայլշեիկ նախագահ հանգիստ կանգնած ե մի կողմ: Մի ականջով ականջ ե զնում ու Եղիշալի հետ կամաց խոսում: Վճիտ ոռոնցները հազիվ զողղողում են ու սորուքը շոյում ե: Նա զիտե քաշած ցավը, զիտե, թե ինչու համար ելին կանչում՝ սուլիչները, ամիսներն ու տարիները....

Թարգմ. Հար. Պետ. յեվ Գար. Հակ.

Հ. Ա. Ե. Թ. Ե. Ց. Ե. Վ.

Բանակում

I

Հունվարի վերջին Միխայիլը դպրոցն ավարտեց և պրապորչիկ (ցարական զորքի մեջ սպայո թրան առաջին աստիճանը) դարձավ: Յուրեվի ոգնությամբ Վոլինսկի պահատի գվարդելսկի դնդում պաշտօն ստացավ:

Ինչքան վոր դարողում նա իրեն առանձնացած երպահում և լունկերների հետ բացի զուտ պաշտոնական հա-

բարելություններից ուրիշ մոտիկաւթյուն չեր ցուց տալիս, այնքան արտեղ, իր վաշտում հետևողական և խելպ կերպով մտերմանում եր զինվորներին:

Այդ մոտիկությունն ակսեց մի չնչին դեպքից, վորով Պրավդինին միանգամից առանձնացրեց զինվորների աշխատամաս—մյուս սպաների շարքից:

Յերիատասարդ պրապորշիկ բարոն Կորֆը՝ վոր Միամբիի հետ միասին եր ավարտել գպլոցը, 10-րդ վաշտի զորանոցում անտեղի կերպով նեղացնում եր շարքային թպատովին նրա համար, վոր պատիվ տախ ուշացրել ե, իսկ իսպատովը մի խեղճ ու կրակ տղակ լեզ լեր:

— Հը, ի՞նչ ե, զգվելի—դատավիլ ես ուզում:

Սխալվեցի ձերդ բարեծննդություն. ներեցեք...

Սնպիտան, փոտքերը գետին եր խփում կատաղած բարոնը: Ու կեղտու, փողոցային հայնոյանքների տարափ թափեց շփոթված զինվորի դիմին:

Զորանոցը լուս եր:

Բայց ահա ամբոխի միջից առաջ անցավ գյորգեսկի կավալեր—յենթասապա Բոլշակովը, և մոտենալով Կորֆին, ցած բայց պարզ ու փորոշ կերպով ասաց.

— Ձերդ բարեծննդություն. — մայր հայնոյելն ել—կարդ չե:

Զարմանքի խուլ ու մութ թնդյուն տարածվեց ու քարացավ:

Ի՞նչ: Ի՞նչ ես տսում: Ի՞նչպես ես համարձակվում:

Ու արդեն ինքն իրեն կորցրած բարոնը ձեռքը լետ տարավ, վոր խփի Բոլշակովին:

Այդ միջոցին ներս մտավ Պրավդինը, վոր լսեց այդ տեսարանի վերջին խոսակցությունը, մոտեցավ և խստությամբ ձեռքը դրեց բարոնի ուսին.

Պրապորշիկ Կորֆ, յես թույլ չեմ առ, վոր իս վաշտում խփեք զինվորի: Լսում եք:

Այս շուռ զալով ու տեսնելով Պրավդինին, վորձ արագ դուրս պրօճնել, բայց Միխայիլի ձեռքը լետ պահեց նրան:

— Աս ի՞նչ բան ե...: Դուք ի՞նչ իրավունք ունեք, պրապորշիկ Պրավդին: Դուք յերես եք տալիս այս զզվելիներին...:

— Յես կորդ, և իմ վաշտի զինվորական պատիվ եմ պաշտպանում:

Էավ... Մենք գեռ հաշիվ կաեսնենք ձեզ հետ:

Պատրաստ եմ ծառայելու, զլուխ ավեց Միխայիլը:

Կորֆը շուռ յեկավ ու դաղվածի պես զուրս թռագ վաշտի շնորից:

Վաշտը կարդ կանգնեց: Ֆելդֆերելը մոտեցավ Միխայիլին՝ զեկուցելու:

Բարի տղերը:

Բարի ձեզ, ձերդ բարեծննդություն, — մի մարդու պես պատասխանեց վաշտը: Այդ միահամուռ աղտղակի մեջ անկեղծ զգացմունք կար:

Այս պատմությունը Միխայիլին արժան չնստեց: Հաջորդ որը գնդի հրամանատարը նրան իր մոտ կանչեց:

Պրապորշիկ Պրավդին, ձեզ հանձնարարել են, իբրև շատ լավ սպա: Ձեր զումարտակի հրամանատարը դովանանքով ե խոսում ձեր տված պատրաստության մասին—ձեր վաշտին: Բայց իմացեք, վոր նման զեպքերը զինվորական լուրջ հանցանքներ են: Դուք խախտում եք զինվորական կարգապահությունը: Դուք զինվորներին իրենց հանցանքների հանդեպ յերես եք տալիս:

Պրավդինը լուս ե:

Բարեհածեցեք անհապաղ գնալ հառւպավախտ (զինվորական բանտ) հաջորդ անդամ յես ձեզ դատի կը առան:

Լսում եմ, պարսն զնդապետ — պատվեց դեպի ձախ. շուռ յեկավ ու դուրս գնաց:

Գնդապետը գլուխը շարժեց.

— Նա արդարացի յե, այս Պրավդինը: Լավ սպա յե: Իսկ այն սոր բալիկ կորֆը—ապուշ ե և անպետք ապաբայց ինչ կարող ես անել... կապերը... և, վերջապես, կարգապահությունը... վաշտի զորանոցում ցածրաձայն շնչում ելին:

— Տես, ե՛. սպա յե... Բայց մեր կողմն ե... են բարոնչիկին վոնց սղմեց: Կեցցե՞:

— Բա դու լսել ես, փոր տասն օրով նրան նստացրել են:

— Ո՞ւմ:

— Դե, պարզ ե, Ելի, ում՝ Պրավդինին:

— Ե՛, — իսկ բարձնչիկին:

— Դե, նրան ինչ կարող են անել, ամիր նրա մայրը թագավորական դարավուլ եւ Բոլշակի շուրջը մի խրճակ եր հավաքվել:

— Վա, են վոնց չվախեցար ե... ախար կարող եր իսկույն դատի տալ:

— Ե՛, թեկուզ հենց դատի տար, հետո ինչ... ախար ինչ իրավունք ունի— են շուն շան վորդին:

Նրա բախտիցն եր, փոր մեր պրապորչիկը բռնեց: Թե շե յս նրան...:

— Ի՞նչ— ի՞նչ կանելիք;

Բոլշակով ձեռքը թափ տվեց:

— Ապասեցեք: Նրանց բոլորի որը կգա...

Այսպես Պրավդինը դարձավ իրենցը՝ «մեր պրապորչիկը», վաշտն ալսպես եր տառւմ եր նրան:

II

Քաղաքն անհանգիստ եր: Գործադուլ եր բռնկում մելայս, մեկ այն գործարանում...: Խոշոր ձերբակալություններ ելին լինում: Բայց նրանք սովորական հետեանքը չե-

լին ունենում: Շարքերից գուրս կորզած տասնյակների ու հարյուրավորների վոխարեն նոր հարյուրներ ու հաղաբներ ելին գալիս:

— Ի՞նչ մեծ բան ե, ձերբակալել են... լսվում եր բանվորների ուրախ խոսակցությունը: Ավելի լավ ե քան ձակառ զնալը: Զե՛, յեզրայր, յերեսում ե վերջը հասել ե:

— Իսկ զինվորները—խոհեմությամբ հարցնում եր մի ուրիշը:

Աւ համարյա միշտ գտնվում եր մեկը, փոր նկատում եր.

— Այժմ զինվորն ել առաջվանը չի: Տանջվեց: Խըրամաններում վոյչիների կեր դարձագի: Խելքի լե լեկել: Ե, զե՛ են ել պետք և ասել, փոր մենք բոլորս զինվորներ ենք... ել առաջվան ժամանակը չի:

— Այդ հո այդպիս ե... հավանություն ելին տալիս մը նացածները: Աւ ցրկում ելին—միմյանցից գոհ ու հուսով լի:

Փետրվարի վերջն եր: Ծովի կողմից թափանցող խորհավություն եր տարածվում: Մեկ-մեկ անձրև եր մաղում: Այնպիս եր ինչպես վոր միշտ, ինչպես տասնյակ ու հարյուրավոր տարիներ ե լեզել: Նեվան տեղ-տեղ ուսել եր: Կողերին գրանիտի տիերի մոռ, փողոցից հոսող կեղտուածի յերկու մութ շերտեր կալին:

Թուխպի միջուկ Պետրոպավլովսկի ամրոցը հազիվ եր սշմարգում: Մթին ելին տալիս պալատների խավարը ճշնչող հակա կերպարանքները:

Առավոտան ժամի լոթն եր: Միխայիլը տանից գուրս լեկագի և ողերգից դեպի գորանոցները:

Հիշեց զանազան կուսակցությունների հեղափոխական գործիչները, անիմաստ, խառնավնմոր և իր վրա խոր արհածություն թողած ժողովը: Անտեղ զգալի լեր շփոթվածություն ու թուլություն: Միան բոլշևիկներն ելին մի բան ասում: Միխայիլը ժպտաց, հիշելով թե, ինչպիս մի

հասակավոր, ակնոցներով, տնգազար ծիւելուց դեղնած դեմքով եսեր, զուրս յեկավ և առաջարկեց մի խումբ քանչ փորներ զինել և զինապահնեատները գրավել: Մենշեկիները բողոքում եյին: Նույն իսկ մեկն այդ առաջարկությունը պրովակացիա անվանեց: Եղանակով վոչինչ ել չփորոշեցին: Բոլորը նույն տեղն ելին զալիս.—ժողովուրդը հեղափոխականորեն և տրամադրված, կազմակերպությունը չնշին բան է, մարտական ուժեր չկան: Ազաղակում ելին իրուպոտած ձայնով, շարացած իրար եյին նայում: Նյարդարնորեն ցնցվում ելին, յերք հանկարծ դուռը բացվեց և յերևաց տանտիրոջ վախեցած կերպարանքը:

Միխայիլն այդ ժողովն եր ընկել ոգտվելով իր հին կապերից, փորոնցից մինչև այժմ զիտակցարար չեր ողբում:

տում տվին գժբախտության մեջ յերբեք չժողնել իրար,
միշտ միասին լինել և, յեթե պատահի, մեռնել իրար
հետ կռվի դաշտում։

Բ.

ԿՐԱԿԵ ՈՂԱԿԻ ՄԵԶ

Անցավ յերեք ամիս այն որից, յերբ պատանիները
մտան Բուդյոննու կարմիր կազակալին գունդը, նրանցըն-
կերացել եր մի շինացի պատանի՝ Յեռւ-Յեռւ անունով։
Մեր հերոսները վասնգով և արկածներով լի ուզմական

կյանքի մեջ կոփվեցին և զգում եյին իբրև իրենց կատա-
րելապես հասուն կազակներ։

Յերեքն ել շատ անգամ մասնակցում եյին կոփվերին,
զնում ելին հետախուզուզության, հիանալի կերպով արշավում
ելին ձիերով և կատարելապես վարժվել ելին զնդացիրնե-
րից կրակել, մասնավանդ «Լուիս» սիստեմի զնդացիրից,
վոր Յեռւ-Յեռւն կարողանում եր կրել իր մեջքի վրա տաս-
նյակ վերստերով։ Շատ բաներում նրանց ցուցադրած ա-
ռաջադիմությունը զարմացնում եր նույնիսկ ձեր կազակ-
ներին։ Շուտով խատաբարո ուզմիկները սիրեցին նրանց,
իբրև իրենք կրասեր յեղբայրների, և հաճախ, խփելով մերթ
մեկի, մերթ մյուսի ուսին, հաճությամբ ասում ելին։

— Դուք իսկական բուգյոնովցի յեք յեղել։

Սա համարվում եր չերգոնցան կազակների ամենա-
բարձր զովասանքը։

Մի անգամ այն կազակ գունդը, վորի մեջ ծառայում
ելին պատանիները, հրաման ստացավ հակառակորդին զուրս
քշելու ամրացրած դիրքերից։ Հարձակումից առաջ անհը-
րաժեշտ եր շոշափել այդ դիրքերը հետախուզություն մի-
ջոցով, վորպեսզի հարվածը հասցվի ամենաթույլ կողմի
վրա։ Մեր հերոսների մի նոր համառ խնդրանքից հետո
գնդապետը համաձայնեց նրանց մենակ ուղարկել հետա-
խուզության։ Ստանալով ուզմական խնդրը, բարեկամ-
ներն ուստ իրենց հին սովորության մի քիչ վիճարանեցին
այն մասին, թե ինչպես պետք ե անեն, վոր վորոշումը
լավագույն կերպով կատարեն։ Իբրև «Հետախուզ»՝ Միշ-
կան, բնականաբար, ինքն ստանձնեց առաջին անկախ հե-
տախուզության հրտմանատարությունը, մասնավանդ վոր նա
մի առանձին հոտառություն և ընդունակություն ուներ
արտագ կռահելու և հարմարվելու տեղին, դրությանը։

Հետևալ որը, զեռ լույսը չբացված, անխօնջ ու հա-

վատարիմ Յեռ. Յեռւի ուղեկցությամբ, մեր հերոսները ձանապահ ընկան, փոտից-գլուխ զինված:

Այդ ժամերին ամեն մի կենդանի արարած քնած եր առանձին խոր բնով նույնիով գիշերային թոշունները հազիվ ելին խանգարում բնության խորհրդավոր հանգիստը անշշուկ յերևալով և վայրկենաբար չքանալով խավարի մեջ: Թանձր մառախուզը, պառավ վճուկի ճերմակ մազերի պես, ծավալվել եր խոնավ գետնի և թփուտների վրա, միապազ շղարշով ծածկել անտառը, լցրել փոսերն ու ձորերը և ամեն ինչ շուրջը դարձրել մի ծխող անտառ, լի խորհրդավորությամբ ու սարսափով: Թվում եր, թե ամեն մի թփի յետեր, ամեն մի փոսում ու ձորում մեկը, սարսափելի ու թշնամի, ուապ եր մտել և սպասում ճամբռզի:

Բայց մեր հետախուզները Հետախուզի առաջնորդությամբ անվախ քայլում ելին այդ սարսափելի մթության մեջ, յերբեմն յերբեմն սալթաքելով խորդուրորդ տեղերում:

Վաշ մի քայլ յետ շմալով, նրանց յետեից գնում եր Յեռ. Յեռւն՝ պնդակազմ մեջքին բարձած «Լուիսի» փոքրիկ զնդացիրը փամփուշտների պաշարով:

Այս կարգով նրանք առանց վորեւ արկածի անցքան մեր գիրքի վերջին պահակակետերը և շուտով ընկան վրանգներով լի «մեռած» տարածությունը յերկու թշնամի բանակների միջև, վորոնք դիտում ելին իրար և վորոնցից լուրաքանչյուրը պատրաստ եր ամեն մի բոպե անսպասելի կերպով հարփածել հակառակորդին:

Այդպիսի համարձակ, չափած ու ձեած քայլերով մի կես վերստ ևս անցնելուց հետո, Միշկան մի բոպե կանգ առավ: Ովողն իսկոյն քիթը խփեց նրա ծոծրակին և նույնապես կանգ առավ ակամա, իսկ Յեռ. Յեռւն ընկավ Ովոդի վրա:

Եշը, — շշնջաց Միշկան: — Պազեցեք:
Յեռ. Յեռւն և Ովոդը վայրկենաբար պազեցին թաց

խոտի վրա և սկսեցին սպասել, թե ել ինչ է հրամայելու Միշկան, վորը գործի ժամանակ չեր հանդուրժում վոչ մի դիտողնելթյուն:

Միշկան ուշագիր ու սուր հայացքով նայեց շուրջը, մտաքերելով ուղղությունը և ընտրելով այն կետը, ուստի ուր պետք եր գնալ:

Շուրջը տարածվում եր մի մերկ տարածություն, տեղակ ձորերով կտրված. առջերգանվում եր մի փոքրիկ թը փուտ, վորը վերջանում եր անտառի ու շերտով:

Բայց ամեն ինչ շղարշված եր ախպիսի թանձր սառախուզով, վոր տաս քսան քայլի վրա արգեն վոչինչ չերեւում:

Առջեւու Միշկան նկատեց մի ինչ վոր մութ բլրանքան բան, վոր նման եր ծառերի պուրակի: Զմոլորվելու և ուղղությունը չկորցնելու համար նա վճռեց ուղղակի զնալ դեպի արդ ըլուրը, իսկ այստեղից ընտրել նոր կետ:

Պառկել և հետեւել ինձ, — կարձ հրամայեց Միշկան:

Յերեքն ել կպան գետնին և ուրվականների պես անշուկ չորեքթաթ առաջ սողացին առաջվա կարգով, իրարից վոչ ավելի քան 2—3 քայլ հետու:

Ժամանակ առ ժամանակ Միշկան կանգ եր առնում, ըարձացնում զլուխը և լարված, սուր հայացքով զփուռ շրջակալքը: Յերբեմն, նմանեցնելով Հետախուզին, նա պառկում եր խոտի վրա և, ականջը գետնին դնելով, լուրում եր լողությունն ամեն մի շրջունի վրա, ջանալով հասկանալ, թե ինչ է նշանակում այս կամ այն ձախն:

Ովոդը ճշտությամբ նույնն եր անում, ինչ վոր Միշկան, և միայն Յեռ. Յեռւն եր, վոր սառնասրտությամբ պազում եր կամ պառկում փորի վրա և համբերությամբ սպասում հետագա հրամաններին: Նա կարծում եր, վոր իր գործը հրամաններ կատարելն եր, իսկ մնացածի մասին պետք է հոգար իր անվախ «կապիտանը», վորի շը-

նորհքին ու տաղանդին նա հավատում եր անվերապահ։

Բայց ամեն ինչ լուս եր ու խավար։

Յերեմի մերթ մեկի, մերթ մյուսի մարմին կարծես սառը ջուր եր մաղվում և սիրաը գողում, բայց նրանք շարունակում ելին առաջ սողալ գեպի նվիրական նպատակները։

Բանից յերևաց, վոր խորհրդավոր բլուրը, գեպի ուր առաջ ելին շարժվում հետախոյզները, վոչ այլ ինչ ե, յեթե վոչ ծառերի մի մեծ պուրակ՝ կտրված անտարից, ովազիսի պես և շրջապատված շատ մանր ու ցանցառ թրփուտով։ Դիմացը, խորին մթության մեջ արդեն յերևում եր անտառը, ուր յենթագրվում եր թշնամին։

— Հանգստանանք, կամաց հրամայեց Միշկան, ոձի պես ներս սողալով թփուտը։

Նույնպես անշշուկ ներս սողացին մնացածները և տեղնուտեղը պառկեցին իրար կպած։

Սակայն զգուշավոր Միշկան մանրամասնորեն հետազոտեց սոտակա թփերը և, գտնելով մի մեծ փոս, հրամայեց համենայն գեպս տեղավորվել նրա մեջ։

Դեռ «դիրքեր» չելին բռնել նրանք, յերբ Միշկան, հազիվ լսելի կերպով շշնջալով, վոր սուս կենան՝ ականջը կպցրեց գետնին։

Ամենքը տապ մտան փոսի մեջ, շունչները պահած և սրտատրով վորսալով ձախները։ Սակայն վոչ Ովողը, վոչ Յէ Յեռ-Յեռն վոչինչ չելին լսում։

Մի ըռպեյից Միշկան գլուխը բարձրացրեց և կամացուկ շշնջաց։

— Յես ինչ-վոր տարորինակ մի շրջուն և տպա մետաղի մի խիստ հատու զնզոց լսեցի։ Սա կասկածելի յէ, տղերք։ Պատրաստ յեղեք։

Ովողն ու Յեռ-Յեռն ձեռաց հարմարավոր հենարան գտան գնդացիրի համար և պատրաստեցին կարաբինները։

Միշկան շարունակում եր անշարժ պառկած մնալ փոքր, սուր հայացքը սկսուած խավարի մեջ։ Հանկարծ նա վոա ընկավ իր կարաբինին և նորից հրամայեց։

— Շշը։ Պատրաստվել կռվի։ Բայց առանց հրամանի շարձակել։

Ովողը վայրկենաբար պառկեց զնդացիրի մոտ, իսկ Յեռ-Յեռն, ըստ սովորականին նստելով ծալապատիկ, փոքր հատակին, անվրդով ձեռքը դրեց փականի վրա։

Մի ըռպե յել չանցավ, յերբ փոսի աջ կողմից, յերեք շորս քայլի վրա, կուզե-կուզ սողաց զինվորի մի գորշ ուրակական հրացանը ձեռքին։

Նրա յետեր աղոտ ցոլաց մի սկին, յերկրորդ, յերրորդը... նույնը ձախ կողմից...

Մեր հերոսները գեա զլիի չելին ընկել, թե բանն ինչումն ե, յերբ ամեն ինչ չքացավ չարագուշակ մառախուզի մեջ, կարծես ուրվականներ լինելին։

Շուրջը խաղաղ եր զարհուրելի...։

— Ի՞նչ ե նշանակում այս, — շշնջաց Ովողը Հետախուզովի ականջին։

— Այս այն ե նշանակում, սատանան տանի, — պատասխանեց Միշկան, — վոր մենք ուշացել ենք հարձակում գործել, գեղնաղեմ շներն արդեն կանխել են մեզ։ Այս առաջին շղթան եր, վոր անցավ... Բանը լավ չե...։

Միշկան բորեց ծոծրակը. նա չեր իմանում ինչ անի և նայում եր Ովողին։

Այն գեղքերում, յերբ դժվարին կացություն եր ըստեղծվում և մի շարք վերացական նկատառութիւններ ելին պահանջվում, Ովողը սովորաբար ավելի շուտ եր հնարը գտնում և գտանդից ազատում։

— Այ ինչ, յեղբայր Հետախուզ. մենք պետք ե, ինչ ուզում ե լինի, շտապենք հայտնել մերոնց, ազապես մեր գունդը կջարդվի։

— Դե, ինարկե, ստունան տանի, — զալրացած պատց
Միշկան, — բայց բանն այն է, թե ինչպես անենք այդ, առ-
ջևներս շղթա յե: Իսկ յետևներիցս, յերկի, մի ուրիշ կու:

Այ ինչպես, — առարկեց Ովոգը: — Յես ու Յեռ-
Յեռւն կմանք ալսաեղ է, հենց վոր յերկա յերկրորդ լըզ-
թան, յետեից զնդացիրացին կրակ կրանանք...

— Հետո, — անհամբեր ընդհատեց Միշկան:

— Հետո, գու իսկույն կվազես առաջին շղթայի յե-
տեից և կաշխատես խուճապի ժամանակ անցնել մերոնց
մոտ և անել, ինչ վոր հարկավոր ե....

— Հրաշալի, — ցնձագին շշնջաց Հետախուզը: — Դու
աղջիկ չես, այլ մի հերոս: Դե, յես չքացա: Բնդունիք
հրամանատարությունը և արա, ինչպես ասացիր....

Այս ասելով, նա չքացավ մասախուզի մեջ՝ թշնամո-
զինքորների շղթայի յետեից:

Յեռ-Յեռւն թեկ քիչ թե շատ հասկացավ, թե ինչի
մասին եր խոսում «կապիտաննը» Ովոգի հետ, բայց և ան-
պես կատարյալ հանգստություն պահպանեց և, առաջիւ-
պես ծալապատիկ նստած, պատրաստ պահած ուներ կա-
րարինը, ապասելով հրամանաւերի:

Միշկան գեռ քսան բայլ ել չեր անցել, յերբ թփերի
յերկու կողմերից յերեացին սպիտակների նոր սողացող
շղթաներ:

Ովոգը հրամաւեց Յեռ-Յեռւին կրակ բանալ նրանց
յետեից ձախ թեկի վրա, իսկ ինքը զնդացիրի բերանն ուղ-
ղեց աջ թեկի վրա:

Տրախ-տախ-տախ-տախ, — հանկարծ ձրթձրթաց գրն-
դացիրը, միանդամից պատօելով վաղորդյան անդորրու-
թյունը և կարծես թե արթնացնելով քնած յերկիրը:

— Բան: Բա-բան... բան, — ձայնակցում եր Յեռ-Յե-
ռւն կարարինից շեշտակի կրակելով:

Մի քանի մարդ թե աջից, թե ձախից գլորվեցին գի-

տին: Յերկրորդ շղթան, վոր բոլորովին չեր սպասում թե
յետեից հարձակում կինի, սարսափահար ցաք ու ցըիվ յե-
կագ զանազան կողմեր, չիմանալով, թե ով և վնրաեղից դ
կրակում:

Խետջին շղթան, լսելով գնդացըրի ծանոթ ձարձատյունը,
խսկու նու կանգ առավ և կարծելով, թե կարմիրներն անցել
են իրենց թիկունքը, յետ զարձավ և սկսեց անկարգ և ըշ-
տապ կրակել յել կրորդ շղթայի սպիտակների գեմ, վարոնք
իրենց հերթին կրակելով առաջինի վրա, փախան դեպի
անապու: Մառախուզի մեջ վոչինչ և վոչվոք չեր կարելի
ձանաչել և բան հատկանալ:

Սկսկել եր մի աներևսակալելի իրարանցում: Մարդիկ
ու ձիեր խողագարների պես վագում ելին յետ ու առաջ,
շնչառակի գիպչում իրար, վասնաւակ տալիս, իրար վրա
կրակում. շաշում ելին սվինները, ձարձատում գնդացիր
ները. լսվում ելին վիրավորների ցավատանջ ձիչերը և
մահամերձների հառաշանքները, վարոնք փոխվում ելին
մարդկացին խելագարության և մահվան սարսափի, մի տե-
սակ գաղանալին վոռնոցի:

Ովոգն ու Յեռ-Յեռւն պառկել ելին փոսի մեջ և ան-
ընդհատ կրակով հնձում ելին ամենքին, ով փախչում եր
գեցի թփերը կամ նրանց մոտով:

2-3 բողեյից հետո յերկու շղթան ել յետ փախան,
խուճապը փոխադրելով թշնամու զիրքերի խորքը:

Ովոգն խսկում կռանեց, վոր ճանապարհը բաց և և
պատվիրելով Յեռ-Յեռւին, վոր զնդացիրը վերցնի հետեւ
իրեն, արագ զիմեց զեպի իրենց զունդը:

Ենո մի հարցուր քայլ ել չելին հեռացել նրանք, յերբ
նրանց ձուռով սրարշավ անցավ շերվոնյան կազակների մի
եսկագբուն, վորը փոթորիկի պես հասավ սպիտակներին և
վերջնականապես արորեց նրանց խուճապ ընկած շարքերը:

Առաջին խսկուրնի յետեից սլացավ յերկրորդը, յեր-
ըրդը....

— ԴԵ, — բացազանչեց Ովողը, — կնշանակի՝ Միշտան
կատարել ե իր գործը:

Եռաւով ծանրորեն վորոտացին թնդանոթները, և ամ-
բողջ անտառը լցվեց կրակով, փոշով ու ծխով:

Արագ ու անկարգ հրածդությունն ամեն տեսակ հրա-
գեններից՝ դարձավ գաղանալին միապաղաղ մի վոռնոց,
վորից գոզում եր գետինը և հառաջում ոգը:

Արդունալի փոթորիկը սլացավ անտառի վրայով:

Մի-էրկու ժամից խնդիրը լուծված եր. Զերվոնան
կաղակների գունդը գրավել եր հակառակորդի զիրքերը,
ջարդելով սպիտակիների յերկու գունդ և զերի վերցնելով
մոտ հինգհարյուր հոգի, հարուստ պաշար, զանազան գեն-
քեր և դաշտացին հրետանու յերեք թնդանոթախումբ:

Մի անգամ կաղակները նկատեցին, վոր «ստատի-
ճուտերը» ուր-վոր շքացել են:

Յերբ այդ մասին հարցըրին ծեր գնդապետին, նաև մի-
այն գլուխը յերերեց և խորամանկորեն ժպտաց քթի տակ:

Բայց ուր շքացան նշանավոր հետախույզները. Այս
մասին ամենքը գլուխ ելին կոտրում և հազար ու մի լեն-
թադրություններ անում, բայց և այնպես չելին կարողա-
նում ճշմարտությունն իմանալ:

Յերեք պատանիները վրտով-գլխով կորել ելին...

9.

Ա Լ Յ Ո Ւ Ի Ռ Ի Տ Ո Գ Ր Ա Կ

Պատանի հետախույզները յերկար պըտումներից ու
սպիտակներին բարեկամ ձեւնալուց հետո գտել ելին Մախ-
նոցի հետքը: Ուզում ելին իրենց գնդի ձեռքը ձգել նրան:
Նրանցից վոչ մեկը չեր կամենում վերադառնար տուանց

հաղթանակի: Մի որ, յերբ հետախույզը սլանում եր մո-
տակա գյուղի ջրաղացից գեպի անտառը, գյուղի հակառակ
ծայրին յերեաց մի նոր ձիավոր, վորն, ըստ յերեուլթին,
նույնպես շատապում եր և կատաղի կերպով մտրակում տանջ-
գած ձիուն: Զնայելով ձիու սարսափելի վազքին, անծա-
նօթ ձիավորը շարունակ հահողում եր:

— Հը, շարժիք վուներդ... Մէ, սատկես դու... Յես
քու տիրոջ...:

Յեվ հաստ մտրակը նորից շառաչում եր ողում, իսկ
սուր-սուր խթանները ծեծում ելին ազնիվ կենդանու կո-
ղերը:

Վերջապես ձիավորն ուժով քաշեց սանձը և ծառս ա-
նելով շնչառապառ յեղող ձիուն, ցած թռավ թամբից սև
շենքի մոտ:

Դա ջրաղացն եր:

Չիավորը ատրճանակի կոթով ծեծեց դուռը:

Ներսից անհապաղ լսվեց պառավական մի հազ, և
դուռը բացվեց:

Փոքրիկ լապտերը ձեռքին՝ գուրս յեկավ ծերունի ջր-
րաղացանը և, խոնարհ գլուխ տալով ձիավորին, առաջ-
նորդեց նրան սենյակի:

Մի բոպե, ծերդ գերազանցություն, սպասեցեք,—
ասաց ծերուկը քծնանքով.—Նա իսկույն դուրս կգա:

Հուրը մտերմորեն խփեց նրա ուսին:

— Ուրեմն համաձայնեց աղջիկդ, ծերուկ, թէ դար-
ձյալ վախենում ե ինձնից:

— Ինչու պիտի վախենա... Այսպիսի գեղեցիկ տղա-
մարդուց վախենալ, հե-հե-հե....

Քծնանքի ժպիտն յերեսին, ծերունին յերկու շիշ գա-
րսջուր զրեց սեղանի վրա և, մոտենալով ներքին պատին,
թխթիկացրեց:

Դուռը ճոռաց, և շեմբում յերեաց գեղեցկունին: Տես-

նելով հյուրին, նա ցնցվեց և շփոթված կանգ առավ շեմքին:

— Բարե ձեզ, ատաման... :

— Բարե, բարե, դեղեցկունի:

Ատաման անվանված հյուրն ուրախացած բռնեց նրա ձեռքերից և տարավ նստեցրեց իր կողքին նստարանի վրա:

— Եւ, իես գնամ մի քիչ ուտելու բանբերեմ:

Ծերունին շտապ քայլերով դուրս գնաց:

Մենակ մնալով, հյուրն ու աղջիկը մի բոպէ լուս եցին: Աղջկա ափաշկաբա սառնությունը, ըստ յերևութին, շփոթում եր, հյուրին, և նա չգիտեր ինչից սկսի խոսակցությունը:

Բայց կոպիտ բնավորությունը իրենն արավ: Նա հանկարծ գրկեց աղջկա իրանը:

Վախից և զգվանքից դողալով, աղջիկը վեր թռավ, նետվեց մի կողմը և աղերսագին շնչաց:

— Ի սեր աստուծո, ատաման, թողեք ինձ, խնայեցեք...

Աղշած ավագակը մի բոպէ շփոթվեց, հետո ձեռքի անփութ շարժումով սեղանի վրա թափեց մի բուռ վասկի:

Յերկու-յերեք վոսկի զրնդալով ընկան հատակի վրա:

— Վոչ, վոչ: Ինձ գոչինչ հարկավոր չե, — կանչեց աղջիկը սարսափով: — Վերցրեք ձեր վոսկիները, միայն խըզճացեք ինձ և գնացեք...

Ավագակը գարմանքից չաեց աչքերը: Առաջին անգամն եր, վոր նա հանդիպում եր այգալիսի դիմադրության և անշահասիրության:

— Գուցե ձեզ պակասում ե այս: Առ և նստիր մոտիկ:

Ավագակի ձեռքին չողաց մի թանգագին շողակիու մանկակ:

Բացց աղջիկը մի քայլ ես յետ գնաց և բացասարար շարժեց գլուխը:

— Հաւաք ինչ ես ուզում, սատանան քեզ տանիք: Թե մոռացել ես ում հետ ես խոսում: Դու զիտե՞ս, վոր ամեն

մի գեղեցկունի ամբողջ Աւկրանայում ուրախությամբ կամ իր միջամատը մեծ բատկո Մաֆինովին:

Քա նա յեր-ջարդված ավագակախմբի ատամանը և մոքերգային հանրապետության վոխերիմ թշնամին: Հպարա ավագակը ուստի նվաստացած եր աղջկա մերժումից:

— Յես այդ շատ լավ գիտեմ, — գունատվելով մեծ աղետի նախազգուշացումից, պատասխանեց աղջիկը. — բայց և այնպէս ես չեմ կարող իոն ձեռքը տալ մի ավագակի...:

— Զենդ կարի, շան քած, — կատաղությամբ գոռաց Մաֆինոն, բռնելով նրա ձեռքից: — Կջարգեմ:

Մի ցածր ճիչ արձակելով, աղջիկն անդգա բնկավ տըմարդ ավագակի ձեռքերի վրա:

Շատ լավ, — շնչաց ավագակը, բարձրացնելով նրան իր ուսի վրա. — զու չուզեցիր յոնթարկվել ինձ ազատ կամքովդ, յես ուժով կիերցնեմ քեզ...:

Աշաթափ աղջկան ուսի վրա տած, Մաֆինոն դուրս յեկավ բակը և գիմեց դեպի ձին:

Նա չնկատեց, թե ինչպես այդ վայրկյանին ինչ-վոր մե սառվեր սողաց թփուտի մեջ և թագ կացավ այնտեղ ծանք սարսափության մեջ:

Մաֆինոն հասավ ձիւն և աղջկան գնելով թամբի վրա, խոնարհվեց գետնին, վոր տանձը յետ անի:

Չարագուշակ սավերը նորից յերեաց ատամանի յետել, և հանկարծ նրա գլխին իջավ մի հաստ տոպրակ ու կապ ընկավ վզի շուրջն ու գոտկատեղից ներքի: Յեզ Մաֆինոն, նախքան վզի կընկներ, թե ինչ պատահեց և փորձ կաներ թուրը հանելու, մեկ ել տեսավ, վոր պառկած և գետնին ձեռքերն ու վոտքերը պինդ կապկած և շնչանեղձ և լինում ալյուրի տապրակի մեջ...:

— Մը, այս լավ յեղավ, սատանան ամնի. — բացագանչեց մի ձանոթ ձայն, կապելով թոկի վերջին հանգուցը Մաֆինովի վոտների վրա. — հիմի վոր ել չես պրծնի, ավագակ: Իե, Յեռ. Յեռ, վերցրու սրան:

Մախնոն զգաց, թե ինչպես մեկը բռնեց իր վոտներից, իսկ մյուսը զլից և, տարութերելով ողի մեջ, ձգեցին հավանաբար իր իսկ ձիու թամբի վրա։ Հետո նրան ձիու վրա պինդ կապկացին թուկերով։

— Կարծե՞ն չի ընկնի, — ասաց նույն ձախը։ Յեզ հավանաբար կամենալով հավաստիանալ այդ բանում, մեկը խիստ քաշեց վոտներից և ճրեց կողը։

Այսուհետեւ ձախերը լոեցին, ըստ յերևութին հեռանալով դեպի ջրաղացը։

Մախնովի մոտ մնաց մի պահապան, վոր փորձեց՝ թուկերը լուգ են կապած թե չեւ ապա կարաբինը զարնելով գետնին, անշարժ ցցվեց ձիու մոտ։

Խորամանկ ավագակը վճռեց կաշուելու պահակին։

— Ե՞ւ տղա, — խոսեց նա տոպրակի միջից, — յեթե ուզում ես հինգ վոոկի վաստակել, բաց արա թուկերը։

— Զեմ ուզում, — կարձ պատասխանեց պահապանը։

— Տասը վերցրու։

— Զեմ ուզում։

— Հիսուն։

— Թադ ըլի զլից։

— Ուզում ես հազար, — միանգամից ավելացրեց Մախնոն, հավատացած լինելով, վոր պիտի հաղթի։

— Յեթե վոսկիները քեզ մոտ են, մենք առանց քո ասելու լիլ կվերցնենք, — պատասխանեց անողոք պահապանը։

ԱՌ, սատանան քեզ տանի, — զայրացած քրթմնջաց ատամանը՝ անհաջողութիւնից հիասթափված։ Հապա ի՞նչ ես ուզում, հիմար։

— Հիմարը նստած եւ տոպրակում։

— Բացց գու զիտե՞ս, շան վորդի, ում վրա յես պահապան կանգնել, — աղաղակեց Մախնոն, ըստ յերևութին, վճռելով վախեցնել անողոք պահապանին։

— Ավագակի, թալանչու և ստոր դավաճանի, — յեղակ պատասխանը։

— Յես ինքը Մախնոն եմ, Յեվ յեթե այս իսկ բոպելին չբանաս այս անիծլալ տոպրակը, իմ սարդիկը յոթը կաշի կհանեն քեզնից։

Բայց այս վերջին սպառնալիքն ել, ըստ յերեսութին, հարկավոր ազդեցություն չունեցավ։

— Յես միայն մի կաշի ունեմ, իսկ թե քանի՞մն ունի Մախնոն, մենք այդ շուտով կտեսնենք։ Իսկ տոպրակը անիծված չե, իսկ քո չափսի յե։

Մախնոն կատաղորեն գոռաց։

— Սպասիր գու գեռ, շնչն, յերեկ մի որ ձեռքու կընկնես։

— Իսկ գու բավական է հաջես, ավագակ, թե չեւ այս բոպելին շալվարդ կհանեմ և զոլեր կքաշեմ վափուկ տեղերիդ վրա։

Մախնոն անզոր կատաղությունից կրծտացը բեց ատամերը և լոեց։

Ծուտով վերադարձն ատամանի մյուս անտեսանելի թշնամիները, բերելով իրենց հետ կըրադացանի աղջկան։

— Որիորդն ել եւ ուզում հեռանալ այս ավաղակալին վորջից և գու մեզ հետ կարմիրների մոտ, — հաղորդեց մեկի ձախնը։

— Նատ ել լավ եւ անում, թող գա, մենք ամենքի համար ել տեղ ունենք։

— Յեվ Մախնոն սկսեց ծանրորեն ձոճալ տոպրակի մեջ, զգալով իրեն իրրև չարաձձության համար բռնած մի հիմար յերեխա։

Նա չեր կարողանում վրոշել, թե վոր ուղղությամբ են տանում իրեն իր անծանոթ թշնամիները, բայց ձիու վոտների տակից լսվող չոր ճցուղերի ճարճատյունից իմացաւ, վոր անցնում է անտառուվ։

Ո՞ւր են տանում:

Զիերը թռչում էլին....

Կարմիր արևն արդեն շառագունում եր յերկիրը և վաղորդյան կապույտ ժպիտը խաղում եր յերկնքի յերեսին:

Բայց տոպրակի մեջ առաջվա պես ձութն եր և անհարմար:

Յեզ պատանի կարմիր հետախուզզներն իրենց անըսպասելի զյուտն արագությամբ հասցըին չերվոնի կազակների գունդը:

Շատ շանցած՝ նորից բռնկվեց քաղաքացիական պատերազմը:

Հարլուր հազարափոր ալ-կարմիր զրոշակներ, տափաստանի հրդենների բոցերի նման, ծածակվեցին նորից կարմիր գնդերի վրա: Միլիոնափոր սվիններ ու թրեր լուսավորեցին ռազմիկների մուալ գենքերը չարագուշակ շողերով: Յերկիրը գլրդաց ծայրից-ծայր, աղմկեցին անտառներն ու դաշտերը,

Ընկածների տեղ վոտի յելան կենդանի մարդիկ:

Հիվանդներին և թուլակազմներին փոխարինեցին առողջները:

Զահելները կանգնեցին պառավների տեղ:

Յեզ մի նոր ուժով վորոտացին թնդանոթների սի յերախները, վոռնացին հրանոթները, սուլեցին ու յերգեցին միլիոնափոր գնդակներ....:

Վերջին կովի ծխի և բոցի մեջ Աշխատանքի պողպատի կուրծքը խենթ ուժով զարնվեց կապիտալի արծաթե և վոսու կրծքին: Կալծեր ցալտեցին: Գետինը ցնցվեց և ոբորվեց:

Իսկ յերեք փոքրիկ մարդիկ, յերեք փետուրների պես, պտույտ-պտույտ յեկան ար մղձափանջալին մրոխի մեջ, չիմանալով, թե ինչ սպասում իրենց վազր, թե ինչ կպատահի մի ժամ կամ մի րոպե հետո նրանց կրանքը

կախ ընկավ մազից: Բայց մեր հերոսները բոլորովին չելին գիտակցում վատանգը: Հոգով կայտառ, համարձակ հաղթահարերով անթիվ դժվարություններ, նրանք համդուզն դիմեցին կովի ամենավտանգավոր վայրը, խորը գիտակցելով, վոր իրենց յերիտասարդ կրանքը զոհաբերում են հանուն հեղափոխության, հանուն բանվորների և աշխատավոր գլուղացիների ազատազրության:

Վ. ՆՈՐԵՆՑ

Հոկտեմբերական

Արտօր ցնծում ենք մենք,
այսոր ցնցում ենք մենք
աշխարհը հիմքից:
Հոկտեմբեր,
Մենք թո յերգն ենք,
Հոկտեմբեր,
բռունցքված հին կյանքի դիմ:
Մենք սերունդ ենք թո—
պիսներ,
կոմսոմու,
մեր հաղթ լախտի
շաչ ու շառաչի ներքո
աշխարհ—լախտած մի հոլ
դարձ-դարձ և շրջում
մոլոր—խելացնոր:
Մենք կըլախտենք,
մենք կիմախտենք նրանց հիմքից
մեր կամքերով հզոր,
վոր նաև զանի
իր առանցքը նոր:
Հին կյանքը մեզ ձաղկել եւ
լախտել
հիմա մենք իմախտել,
հաղթել ենք նրան

ու հաղթական ծաղկել ենք
 Քո թերի ներքո:
 Մենք ծաղկել ու ծիծաղն ենք Քո,
 մենք ծափ ու ծնծղան ենք Քո,
 Քո մարտի վերջին գրոհը.
 Հոկտեմբեր,
 մենք Քո յերգն ենք բերկուն,
 Հոկտեմբեր,
 մենք քո բերքն ենք բեղուն
 Մենք քո ձեռքն ենք,
 Հոկտեմբեր,
 գալիքի դրոշը պարզած:

ՀԱՅՈԲՀԱՅՈՒՆ

Բայլյելիկ և Շիր-կանալը

(Ներածություն)

Յեկել եմ...

Յեկել եմ, վոր մի որում յերգեմ յերգդ այն զիլ-հնչուն,
Դոր ձուլեցին պոյեաներդ յոթհարյուր յոթ որվա միջուժ:

Յեկել եմ, վոր վողջունեմ այն վայրերին քո սիրառուն.
Ուր դարերով յերբեմն միան ծղրիդներն ելին խոսում...
Յեկել եմ...

Յեկել եմ համբուլը տալու այն յերաշտած կոշտ հողերի,
Դորոնց միջից առատորեն կաթ ու մեղրն և այսոր հոսում:

Ինը Շիր-կանալ, վոր հազարանց քրտինքների միջից լսար,
Նրանց քրտինք գետեր շինած դարձած խորհուրդն աշխատանքի,
Դու վոր հազար հազարների քլունդների յերգը լսած
Առատության հիմնը շուրթիդ հիմք ես զնում մի նոր կյանքի՝
Մեծ վողջունի և հրճվանքի յերգն եմ բերում քո դաշտերին—
Յեվ հիացմունք բոլոր աղջի, բոլոր յերկրի պոյեաներին:

Բայլյելիկ և Շիր-կանալը—մի աժդահա հերյաթալին,
Նրա շուրթը ջուր և խոռում պազ ակունքիցն Արփաչալի.

Գլուխը հաղթ թաղել ե խոր կանաչագույն, գուլալ գետում.
Պոչը հեռու կապսի ծոցում ալիքներ և հեռուն նետում:

Մեծ ու մեծ և Շիր-կանալը, կամարածե, գեղեցկաթով,
Փաթաթել ե, վոնց և գրկել Շիրահալիթը, յերկու թաթով.
Մի խանդավառ կարոտ ունի, են ծարավը սիրած յարի,
Վոր կարծես թե սեր ու խանդի կարոտել ե հոգար տարի.
Հույզեր ունի սրտի խորքում խորհրդավոր իր հորձանքով—
Վողջ իրանը դողունքի մեջ ապրումների մի կրքոտ ծով.
Յեվ ամենքին իր յերթի մեջ ուժ տեսնում ե ու ճանաչում
Խոխոջումով լսում ես մեկ, ավետում ե, վողջոյն, վողջույն....

||

Բայլյելիկ և Շիր-կանալ... այն վայրերը յերկ ու ըարբագ,
Դորոնք իրենց ծնված որից այրի երին—մերկ անապատ՝
Այսորից յետ հագնելու յեն սիրակարոտ հարսերի պես
Զուք զարդարված խաս ու կանաչ, թավիշ մետաքս զառուղարբար:

Մի հմայող վոլորտումով, արծաթափակ գրավչությամբ,
Հիմա հոռու հեռուներն են ձգվել ցանցերն Շիր-կանալի.
Այնպես զրկել, այնպես ծծում հողի շուրթը ագահությամբ,
Վոր կարծես, թե հողն ե տնքում պինդ համբուլը սիրահարի:
Անչ մի թիզ հող, վոչ մի ավան և վոչ մի գյուղ խոչկանդ
Դպում ես, վոր չի տանջվելու այսունետե բարակ յերաշալից:

Բայլյելիկ և Շիր-կանալը, հոգսր քաշող ամեն մարդի—
Մեծանողի, ներողամիտ՝ բարեկամի ու տարդի:

III

Բայլյելիկ և Շիր-կանալ... Դարու գավակ այս հերոսին,
Մեր այս գարու հարապատին ով չի տեսել թող գա տեսնի.
Միլիոնավոր պայմանական հրճի, հարձակումի ականներով,
Արփաչալի ժեռ ափերին զրոն տվող ուռաներով
Դիրքերից—դիրք, նվաճումներ, մի թոննելը զսդող մյուսին,
Աշխատանքի հերոսները մատի շարժով նրան ասին—
Ուր ձեռք մեկնես այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ թող կանաչի
Ռոք յիրեաս, ուր ել հասնես մի նոր սերունդ այնտեղ աճի.

Ավ ծարագ ե թող հագենա, ով յարամագ թող կշտաճա...
Այսպես եւ մեր Շիր-կանալը, մի զբումքեցի ողուլ ե նա
Յնդ դարդիման և սրտարուխ և բախնաշուրթ և հյուրասեր—
Քեփը տեղը, յերգը բերնին, խոսքը շուրթին, լիտոստ սեր.

V

Բայլշեիկ ե Շիր-կանալը... և զյուղերը պիրկըն առած
Յանցել և իր արյունատար յերակներով համատարած.
Մեկը պիտի հագարների մասին հոգա—մի զեկավար—
Հաղարները խանդով վառված պիտի հոգան մեկի հանար.
Հրեն կատրը սարին կանգնած հովքականչին ձեն և տալիս
Թե հեյ լոեր, հրես ջրիս ձենն և գալիս, ձեղ և գալիս...
Կանգ և տոել Պոլիդոնը և սիրահար կուլսի նման
Քրքջում և ու սպասում, վոր գան գրկեն, սիրեն իրան.
Ոճճամբեր և Որթաքիլիսան, բարախում և սիրտը նրա,
Յնծությունից շունչը պահած քիչ և մնում ճշա, պրոս.
Յերազում և Թոփարլիսան, աչքով անում Ղոնախուանին,
Հասկանում և Հաջի նազար ու կանչ անում հարեանին:

—

Այսպես մեկը ձենում մկուսին, ավետում և հեռու տեղից
Դուղքյանդը՝ Քափանկին, Թափոլաղը՝ Իլիփարին.
Այսպես մեկը ահա մյուսին ավետում և յերկու վերստից.
Թե զալիս և Շիր-կանալը—բայլշեիկը Հայաստանի:

V

Եւրիշ փահմ ու սամիթ ել ունի մեր բայլշեիկ Շիր-կանալը
Եա Շիր-դաշտի մեջը գրկած կապսի մոտից ինչպես նալլ
Զրլնկեցով նորից պիտի թափմի ծոցը Արփաշայի,
Վոր պայքարի միջից խլի ուժը հիգրո-ֆիկացիայի:

Յերդիչներից վժը մեծն է ալն, վոր յերգել է ուժի մասին
Շիր-կանալը փրփուր խասով շիր-առյուծ և, բաշը լուսին.
Լուս թեկրի փաղաքանքով պիտի ցանցի վողջ գլուղերին
Յեվ զինամոն կայծակ-փնջով ալրի նիբելը մութ հյուղերից
Պիտի տեսնեն, վոր լուսաշագ ասեղները ելեքարոնի
Միոք և ցնցում, զբուղին ասում. վոր անելիք ինքն ել ունի-

Շիր-կանալը շիրի նման հանգացով մի պատանի—
Ալիքները փրփուր խասով լույս ապագան Հայաստանի:

VI

Մեր բայլշեիկ Շիր-կանալը ուրիշ փահմ ու սամիթ ել ունի.
Չիսպարի սանձը ձեռքին հոկա ուժով ելեքարոնի
Պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու Փարբիկներ,
Զրուցաներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքեր:

Այն յերկիքը. վոր գարերով քարացել եր ու ցամաքել՝
Այսորից հետ պիտի յերգի աշխատանքի հզոր յերգեր:
Շատ և լացել համբ լացով Շիրակը իր գարդի մասին,
Իսկ այսորից նա լի թորով թող ամենից բարձր խոսի:
Շատ և տանջմել ու տոկացել անհարազատ մարդոց ձեռքին,
Իսկ այսորից թող նվաճի ու տրբանա իր նոր կլանքին:
Ու կատնջմեր նա յել նորից, թե շնչվեր հազթ պատանին,
Թե համաներ Շիր-կանալը—բայլշեիկը Հայաստանի:

(Աերաքան)

Մատազ լինեմ չես այն որին, մատազ լինեմ չես այն ժամին,
Յերբ ինձ նորից կիմակվի այցի գալու Շիր-կանալին:
Տեսա նրա յերկունքը չեմ՝ պեղումները տարի առաջ,
Այժմ նրա բաղ ու բաղչեն արտն ու հանդը, ծառ ու կանաչ:
Վիլաների թափուտ անտառ, ծառուղիներ-ծաղկանոցներ,
Վորոնց բուրից կզգա նորից ջահելություն իմ հոգին ձեր.
Յեկ զիշերը հազարաշչա տարածելով լուսի փշեր
Ինձ կերեա հեռու տեղից մի աստղազարդ հեքյաթ գիշեր.
Յեկ կսուլան Փարբիկների գուղոկները ուրախ կանչով,
Վողջունելով զուղ ու բազաք ալ բացերի հուր ճաճանչով:
Բայլշեիկ և Շիր-կանալը՝ մեծ զավակը Հայաստանի,
Երա վորդին ջահը ձեռքին լույսի աղբյուր մի տիտանի:

ԱՅ. ԶՈՐՅԱՆ

Շիրակի ջրանցքը

Գնում ենք Շիրակի ջրանցքը տեսնելու:
Գիշեր է. Մեր գնացքն անվերջ շխշնկոցով ոլանում

և առաջ: Անցնում ենք մոծակաշատ Սարգարաբադը, անցնում ենք լուս Արաքսը, անցնում ենք անազմուկ Ալազյողը, և լույսը կամաց-կամաց բացվում է ահա: Գծի աջ և ձախ կողմը, Անի կայարանից սկսած, Շիրակի գաշտի շարունակությունը կազմող լեռնուաները—հրաբուխավին ացդ անհեթեթ ժայթքումները—անվերջ հաջորդում են իրար՝ սեկը մյուսի նման, մեկը մյուսի նման: Ու Ախուրյանը՝ հայկական այդ տիսուր գետը՝ մերթ յերեւմ է լեռնուաների արանքից, մերթ թափնում նրանց յետեւ, մողեսագույն ժայռերի անդնդում...: Գծի շուրջն ալրված, պղնձացած բլուրներ են և փոքրիկ հարթավայրեր՝ խանձված արտերով ու խոտերով: Անցնում ենք առաջ, ելի առաջ-տեսարանը նույնն է. բլուրները հալվում են հետզհետե, բայց հարթավայրը նույն տեսքն ունի. ալրված, ծարավից դեղնած ցանքսեր ու արոտներ. վտիտ հասկերը և նվազ խոտերը կապել են չոր, ճաքճաքած հողին: Յեզ այդ բոլորը՝ դեղնած հունձերը, թզաչափ խոտերը, պղնձագույն բլուրներն ու հողը մի տեսչանք ունեն:

— Զուր, վոր իրենց տանջող ծարավը հագեցնեն: Իզուր են յերկար, յերկար սպասել անձրեի: Յերկինքը զլացել եամ, և նրանք այժմ տիսուր, դեղնած ու զլիթելոր նայում են անցորդին:

Ու այդպես գծի շուրջն ու հեռուն տարածված արտերն ու արոտները՝ մինչև լենինական ու ավելի դենք՝ գետնին կպած հեռում, հորանջում են ծարավից... Այդպես են և գյուղերը: Աչա՝ մեկ, յերկու, յերեք, հինգ, յոթ... բոլորը միատեսակ ու միանման անզարդ, անծառ ու տիսուր: Նման են ավելի ավերակների, նման են ուրարտական կամ ավելի հին ժամանակների գերեզմանատների, քան զյուղերի, բարի և մոխրի շեղակուլտեր, վորոնց զլխով կարծես հազարամյակներն են անցել, և նրանք, այնուամենայնիվ, մնացել են անփոփոխ ու անշարժ: Միակ

բանը, վոր վկայում է, թե արդտեղ, այդ գետնափորերուն քառակուսի տուփերում մարդիկ են ապրում դա յեկեղեցին է, ավելի շուտ նրա մամուապատ ու հողմածեծ գմբեթը, վոր բարձրանում է տներից վեր: Յերբեմն ծուխ անգամ չի բարձրանում նրանց յերդիկներից, և տարակուսանքը ճնշում է նայողի հոգին, թե արդյոք հանդած գյուղեր չեն սրանք, վորոնց զլխին ժամանակը իր մոխրին եմ ապել: Վոչ—ահա մի մարդ անցավ գերանդին ուսին, ահա մի կին, վոր կովը տանում է հանգը, ահա մի յերեխա, վոր հորթ և քաշում...: Վոչ, այստեղ ապրում են մարդիկ, վոր հողի ու քարի հետ կոիվ տալով՝ իրենց որիս հացն են վաստակում...:

Բայց շրջապատի ամայությունը վոչինչ չի մեղմում: Ծառի ու կանաչի սովոր աչքն այստեղ վոչինչ չի գտնում, վոր հանգստացներ իրեն: Տեղ-տեղ Ախուրյանի ափերին յերեացող կանաչուտներն ու հատ-հատ ծառերն ավելի զգալի չեն դարձնում այդ ամայությունը և ավելի սուր՝ ծառի ու կանաչի կարոտը:

Ահա և սեւապատ հին կյոււմայրին, նախկին Ալեքսանդրապոլը, արժման լենինականը—նույնպես անծառ ու անզարդ, ինչպես Շիրակի բոլոր գյուղերը:

Ինչու այստեղ ծառեր չկան: Ինչու պարտեզներ չեն գցում: Ինչու արտերը դեղնած են այսպես... Բոլոր հարցերն այստեղ մի պատասխան ունեն— ջուր չկա...:

Անջրությունը Շիրակի հին ցամկը է, և դա յեպատճառը, վոր այստեղի գյուղացին, ավելի քան վորեւե շրջանի զյուղացի, իր ճակատագիրը, իր ամրող լնտանիքի բախար հանձնում է ամպերին և հաճախ, զրեթե ամեն տարի, «Յոթ-վերբը» իր չոր դաշտերում պտտելով չվող ամպերից աղերսում է գութ ու փրկություն:

Գնացքը գանգաղում է կամաց-կամաց և կանգ եառնում հանկարծ: Ենք լենինականի կայարանում ենք:

Խուռն բազմություն։ Կայարանալին յեռ ու զեռ։ Ի՞նդհանուր ժխորի մեջ նոր բարբառ։

— Այ, ողուլ, բլեթը ֆնս ե, ֆնս ե, բնվս ե...

— Բա, ինչզ ել շափուկ կերթա կը...

— Բաքլայե, զուրած կը...

Իջնում ենք և շտապում քաղաք։

Վաղ առավոտ ե և կիրակի։ Այդ պատճառով արհեստավարների և առերարականների այս քաղաքը լուռ ե. Հիւսվում արհեստանոցների սովորական ժխորը, չեն նկատվում շաապող քաղեր։ Խանութները փակ են։

Քաղաքում յերկար չենք մնում։ Շտապում ենք ժամ առաջ կապս՝ ջրանցքը տեսնելու։ Մեր ընկերներից մեկը հագատ չունի այստեղի յեղանակին։

— Մեկ ել տեսար՝ անամպ յերկնքից անձրի յեկապ, — առում ե նա, — լավ կլինի մի բրեգենտ վերցնենք։

Բացատրում ենք, զոր բրեգենտի կարիք չկա, քանի զոր կառքով ենք զնում։

— Եզ դեպքում ով բրեգենտի դեմ ե, թող կառքի առաջին մասում նստի, — հայտաբարում ե նա։

Այդպես ել անում ենք։ Յեկ կառքերը միքանի բոպեցում մեզ զուրս են բերում քաղաքից։

Նորից նվազ արտեր և նոսր, համարյա թե անխոտ խոսնաբեներ։ Տեղ-տեղ հնձել են այդ խոտերը, և ահազին տարածությունը չի տվել անգամ մի փոքրիկ ըլուր խոտ։

— Ժամանակին անձրեներ չեն յեկել, — բացատրում ե կտուապանը։

— Ջրանցքը, ջրանցքը, — բացականչում ե մեր ընկերներից մեկը, ձեռն առաջ պարզելով։

Կավաճողի և սեահողի մի զորց յերիդ, ինչպես ահազին, տուասկելական մի սոզուն, մեջքն ուղցնելովու իջեցնելով, կանաչ դաշտի միջով գնում ե ճեռու։

Կերթա Որթաքիլիսա, ենտեղ, ըշտա, կիջնի ցած, — ուղցաւություն և կառապանը։

Հասնում ենք այդ յերիզին ու կառքերից իջնելով՝ մտնում ենք ջրանցքի հունը։ Մարդահասուկ և զրեթե մի սաժեն լայնություն ունեցող փոս ե, փորված գլխավորապես ու քարի և տեղ-տեղ հողի մեջ։

Քայլական տեղ բաց փորվածքով գնալով՝ հասնում ենք վերջապես սունելին, զոր ջրանցքի աշխատանքների համեմահետաքրքրության մասն ե կազմում և այնքան աշցելուներ և զրագում դեպ իրեն։

Տունելից նախ սառը խոնավություն և փշում մեր գեմքին, հետո, յերբ մտնում ենք ներս, ցուրտ ենք զգում։

Այդ առանելը, զոր 2 ու կես վերստ յերկարություն ունի, աշխատանքները շուտ վերջացնելու նպատակով, փորվել և միաժամանակ ութ տեղից, այդ պատճառով, վորտեղ աշխատանքները շուտ ավարտել են, այնաեղ արգման առաստաղի կողքերը քարել են, իսկ հատակը ցեմենտել։ Անպես զոր մի քանի տասնյակ սաժեն տեղ զնում ենք կող առանելով։ Ապա սկսվում է նոր փորվածք։ Այս արգեն հատակը լին ե զեռ բոլորովին չմաքրած քարենով և առաստաղից թափվող ջրերով։ Մութն ե. կատարցար խոմար։ Գնում ենք խարխափելով, ինչպես կուշրեր, և փորմինեակ հատակին ջրեր ու քարեր կան, զնում ենք առանելի կողերը բօնելով։ Զեռներ են ցեխուավում, զոտներ են ընկնաւ ջրերի մեջ, յերբեմն կոշիկը լցվում է ջրով, բայց վաշինչ-հետաքրքրությունը մղում է առաջ։ Յես մանաւանդ, Թովմաս առարխալի նման, ուզում են ամեն ինչ տեսնել և շոշափել։ Անցնում են տասը և ավելի բովեներ խո զարի մեջ լույսի վոչ մի շող։ Վառում ենք այդ նպատակի համար վերցրած մոմը։ Բայց նա լուսավորում և միայն իրեն և հանգչում շուտ-

շուտ: Բերնից յելած թեթև մի հեք, ձեռի թեթև տատա-
նում իսկուն հանգնում ե նրան: Ու գումա ենք յեր-
բեմ իրար ձեռքից կամ զգեստից բռնած: Մեկ մեկ հոմ-
դիպում ենք քանդվածքների, ավելի շուտ փլվածքների,
վոր գժվարացնում են ճանապարհը, և յես հիշում եմ մի-
քանի գրվածքներ հանքափորերի կրանքից և մանականդ
այն, ուր նկարագրվում է, թե ինչպես խեղճ ածխահատ-
ները, պալթյունից հանքի մուտքը փլվելու պատճառով,
քսան որ մնում են գետնի տակ՝ մի յելք փնտոելու համար
շարումակ յետ ու առաջ գնալով:

Բայց «սարսափելին թվում ե դութոզ», և մենք շա-
րունակում ենք մեր ճանապարհը նուն խավարի ջրի և
ցեխի միջով:

— Առաջ, տղերք, առաջ անվեհեր, խրախուսում ե
մեկը:

Սհա վերջապես լուս ե շողում խավարի խոթքից:
Շտապում ենք: Ելեքտրական լամպեր են:

Մենք արդեն աշխատանքի վայրումն ենք: Բանվորները
փոքրիկ վագոններով կրում են քանդված քարը և հողը:
Լուրջ կենարոնացած և զգուշ դեմքեր: Մեզ տեսնելով
չեն զարմանում: Սովոր են նման հյուրերի:

— Բարե, տղերք:

— Բարե, — պատասխանում են կարճ և շարունակում
իրենց գործը նույն կենարոնացած, զգուշ շարժումներով,
վոր մինի թե հանկարծ փոքրիկ վագոնը դուրս ընկնի
ուելից: Յերկու հողով բռնած վագոնի կողերից՝
հրում են հասցնելու մինչև շախտան, ուր լիֆտը 23 ա-
տեն խորությունից հանում է այդ քանդվածքը գետնի
յերեսը: Նույնպես վեր են հանում և հատակին շնապած
ջրերը տակառներով:

Բանի առաջ ենք գնում, հատակի ջրերը շատանում
են, կարբիդի, ծծումքի հոտը դառնում է հեղձուցիչ, քան-

փոքրներ տվելի շատ են յերեսում, փոքրիկ վագոնների թիվն
ավելանում է: Հանդիպում ենք մի խմբի, վոր ինչ-վոր
բան ե չափում:

Կարելի՞ յե առաջ գնալ:

Կարելի յե, բայց շուտ վերադարձեք: Կես ժամից
հետո պայմանն ե լինելու:

Պայման... Յես նորից հիշում եմ այն խեղճ ածխա-
հատներին, վոր քսան որ մնացին գետնի տակ....

Բայց կես ժամ կա տակավին, և մենք արագ-արագ
առաջ ենք գնում շուտ վերադառնալու համար: Ու քանի
առաջ ենք գնում, ողն այնքան դառնում է հեղձուցիչ,
ծանր, կապարյա.... Խորքում լույս ե յերեսում: Խավարի
և թանձրացած սղի մեջ նա նման է փոքրիկ առկայծող
կրակի: Այդ փոքրիկ կրակները... ի՞նչ դյութական ուժ
ունեն նրանք խավարի մեջ: Անթիվ խոստումներով նրանք
կանչում, բաշտմ են դեպի իրենց:

Մոտենում ենք վերջապես:

Աշխատանքի ամենահետաքրքրական վայրումն ենք
արգեն:

Այսական, գետնի յերեսին 24 սաժեն ցած, փորում
են ժայռերի կուրծքը: Ինչպես անդունդն ընկած, յելք
շգմնող հասահատ մեկը՝ մերենան, խտացած ողի ողնու-
թիւմք, համառոքեն ու անընդհատ շանգոսում, կտոր-կտոր
պոկում և կարծր ժայռը: Ու նրա մոտ, ելեկտրական լաւ-
պի աղոտ լուսի տակ յերեսում է նախ մի կերպարանք
մարդկացին, հետո յերկրորդը: Բանվորներ են՝ բահը ձեռ-
ներին, վոր մերենակի քանդածը յետ են ածում գեպի յեր-
կաթագիծը, վորպեսզի փոքրիկ վագոնները դան և կրեն
այն: Ու աշխատանքը խուլ, համառ ու միորինակ սիթմով
շարունակում է անընդհատ: Կրախավարի մեջ այդ բան-
փորները թվում են ժայռեր շպրտող և սարեր տատանող
առասպելական հսկաներ, վոր այժմ գետնի տակ մտած,

ժայռերի արգանդում ճանապարհ ևն հարթում դեղի լույսը... կամ թփում են անձնվեր մարտիկներ, վոր կովի լեն լելել իրենց ջրերը ցանաքեցնող անեղ վիշտավի դեմ...:

Ողբ հետզհետե ծանրանում ե, ավելի շուտ մեղ համար գառնում ե այնքան անսովոր, վոր իմ առաջին հարցը բանով աշխատող բանվորին լինում ե այն, թե քանի ժամ են աշխատում որական:

- Ութ—պատասխանում ե նա:
- Իոկ քանի՞ հերթ եք աշխատում:
- Յերեք:

Աւրեմն ժայռերի այս մթին արգանդում, ծանր ողի մեջ որ ու զիշեր աշխատանք ե լեռում: Մեքենաներն ու մարդիկ միացած՝ անդադար փորսում են, փորում...:

Սրանք գնում են դեպի մուտքը, իսկ մուտքից, Արփաշալի կողմից, առաջ է գալիս մի ուրիշ խումբ:

Վերջին խմբերն են, վոր սիրտի ճեղքեն տունելը և միանան իրար:

- Յերեակացում եմ, ինչ ուրախ հանգիստում ե լինելու:
- Մի կատարյալ առն՝ աշխատանքի հաղթանակ:

Մասամբ սովոր ծանրութիւնից, մասամբ պայմանի լերկաւդից ընկերներն շտապեցնում են. «Գնանք գնանք...»

Դառնում ենք նույն ճանապարհով: Համնում ենք շախտացն և ուզում ենք բարձրանալ վեր: Լիֆան զբաղվոծ ե. նա քանդագծիներ ե վեր համում: Առաջարկում են սպասել կամ բարձրանալ լերաբաներով... 24 սաժեն վեր: Մի փոքր տառանվելուց հետո՝ զերազատում ենք վերջինը:

Առ սկսում ե մի անորինակ վերելք—ուղղահարաց ու մթին: Ալսեղ ավելի բազուկներն են աշխատում, քան վուները: Բարձրանում ենք սանդալացից-սանդալաք, բարձրանում ենք, և վերելքը կարծես վերջ չունի...: Մութն է վերից, ուշենից բարձրացողը իր վոտներից, սանդուխի

տուտինաններից շարունակ հող ե թափում ցած, ներքեւից կնացուալի զիսին. միւշանց չենք տեսնում, այդ պատճառով շուտ-շուտ կանչում ենք իրար.

— Վահան, գալիս ես:

— Այս...:

Իւ բարձրանում ենք, բարձրանում ե, վերջապես, առաջ հազի լերեսին ենք, արեի տակ:

Կարծես մթին ուղիներում քայել ենք շաբաթներ ու ամիսներ, մեր կուրծքն սկսում է լայնացած շնչեր, ու արեկ թփում ե այնքան սիրելի, վոր ուրախությունից ու զուժ ենք ճշակ վոզչուն քեզ, արե:

Մինչդեռ ընդամենը ժամ ու կես ենք մնացել գետնուրում:

Ի՞նչպես են անում այն մարդիկ հապա, վոր զիշեր ու ցերեկ՝ որական ութ ժամ անընդհատ կարբիզի, ծծումը բի հոտով հափեցած ողում աշխատում են լարված մկաններով և կացած մեջքով...

Դուրս գալուց անմիջապես շտապում ենք Արփաշալի ձորը՝ առւնելի մուտքը տեսնելու:

Խոր ձորը, վորի անդնդում խշում ու թշշում ե Ափուրյանք, շրջապատված ե տեղ-աեղ պղնձագույն ժայռերի պարփակներով, վորոնք խստագեմ ու մուզ կախված են խշապատ ջրերի վրա: Սայդի կեռ ու մեռ ճանապարհով իջնում ենք ձորը: Ալսեղ կա փոքրիկ տնակների մի շարք, վոր ցեսենենուի, վայտեղենի և այնութերի պահեստներ են:

Ահա և մուտքը: Հօկարյական, մոտ 30 սաժեն բարձրություն ունեցող, հողմերից ու արեկից շիկացած, պղնձագույն, զրեթե միաձուլ ժայռի տակից բացվում ե այդ մուտքը՝ արգեն քարված ու ցեսենաված: Բացվում է նա, վորպես անկուշտ մի լերախ:

Այստեղից ե ահա, վոր Ափուրյանը կամ իր ժամանակից անունով Արփաշալը, իր անդնդախոր ձորից

պիտի գնա՞ նախ 2 ու կես վերսա տունելով, ապա բաց ջրանցքով՝ Շիրակի ծարավ դաշտը փռողելու, նրա ամեն թյունը բեղմափորելու և նրա գեղնած դեմքին դվարթություն տալու:

Այս ջրանցքը մեր փոքրիկ, ծարավ յերկրի համար մի մեծագործություն եւ նա հիմք ե դնելու մի նոր կտակությափ, նոր տեմպ ու նոր ընթացք ե տալու ժողովություն տնտեսության և լույս ու բարեկեցություն ե քերելու Շիրակի դաշտում ծվարած «ահով նիբնող խրճիթներին»... Ջրանցքի նշանակությունը մեր ընկերներից մեկը շատ ձիշտ բնորոշեց այցելուների գրքում թողած իր հակիմա խոսքերով—«Ջրանցքը Շիրակի կենսանցքն ե»: Վերջին բառը թեև անհարմար բառ ե, բայց իմաստը ճիշտ ե: Այս ջրանցքը, իրոք, կանք և կենդանություն ե տալու ամբողջ Շիրակին: Ախուրյանի պաղպաջուն ու զովարար ջրով նրա մոռյլ, անհամբույր ու անզարդ գյուղերը պիտի պարզութեն ծառաստաններով ու այգիներով, գյուղացիները պիտի ազատագրվեն ամսերի որիենտացիալից, իսկ ցանքսերն այլևս չեն մնա ջրակարու... Աշխատանքի լեռտնդի ու սերը չի պակասում հայ գյուղացուն: Նրա մեջքը կոտրում, նրան թշվառացնում ե իր յերկրի ժլատ բնությունը: Ջրից հետո նա կարճ ժամանակում կկերպարանափոխի իր գյուղն ու կենցաղը և անտեղ, ուր այժմ տեսնում էնք մոռյլ, գերեզմանատների նման գյուղեր, մի տասը, քան, յերեսուն տարի հետո կոմենանք ծառաստաններում թաղված գեղեցիկ շեներ: Նախ և առաջ ծառերը կծածկեն նրանց մերկությունը, ապա փայտեղեն կմատակարարեն վառելիքի և շենքերի համար ու աթարի րուրգերի տեղ սեր գյուղերում կրարձանան կղմինդրե կամ թիթեղե տանիքներ... Յեվ ալսպես այն բոլոր տարածության վրա, ուր անցնելու յե ջրանցքը: Իսկ ջրանցքը պիտի անցնի 45 վերսա տարածություն և պիտի փռողի 15,000 դե-

սպասին ցանքսեր, բանջարանոցներ, խոտհարքներ ու այդիներ:

Պոռոգման շրջանի մեջ են մանում Լենինական քաղաքը և 13 զյուղ:

Մուտքից հետո դառնում ենք Կապս՝ բանվորական կացարանները տեսնելու: Դրանք գտնվում են Կապս գյուղից մի քիչ հեռու և բոլորը միասին կազմում են գրեթե մի փոքրիկ գյուղ: Այստեղ ապրում ե 500 բանվոր: Գիշերում են հանրակացարաններում: Ունեն իրենց ճաշարանը, ակումբը (ուր նաև ներկայացումներ են տալիս), բաղնիքը, հիվանդանոցը (յերթևեկների համար). այստեղ են գրադարական մոտորները, վոր լույս են մատակարարում բանվորական կացարաններին և տուններներին: Հայ վարպետների և բանվորների հետ միասին ախտեղ աշխատում են հուն, խտալացի և ուսուբանությունը ու վարպետներ: Այստեղ և ապրում ջրանցքի աշխատանքները հսկող մեժեներն իր ողնականներով: Այստեղ կան մարդիկ, վոր ապրում են և ընտանիքներով: Կապսի ոկր յերեւլլիւր—շոր և թեթեւ:

Վերադառնում ենք: Նորից անցնում ենք Շիրակի ծարավ դաշտերով: Հեռուները՝ միապաղաղ գորշ, անհրապույր սարեր ու բլուրներ են: Այդ ընդհանուր գորշ տեսարանը մեղմում ե Արագածն իր զույգ ձկունակատար գագաթներով: Իսկ նրա յետեկից, ամպերի տակից յերեւում ե «հայոց աշխարհի մեծ հսկան»—Մատիսը: Ալեհեր դուխը վեր պարզած՝ նախում ե նա Շիրակի դաշտին հսկող պահակի համառ հայացքով: Կարծես զաշտի պահպանությունը նա չի գտահում Արագածին, ու իր ծեր զլուխը բարձրացրած սարերի յետեկից, Արագածի թիթենքից, ինչպես պատին իր թուան ուսից, նախում ե, թե արդյո՞ք ամեն ինչ կարգին և այստեղ—Շիրակի դաշտում: Ու զարմանքից ասես մնացել ե սառած—ինչ հանգուզն բաներ

Են կատարվում այսուեղ՝ Շիրակի գաշտում... Մարդիկ փորում են կուրծքը հավիտենական ժայռերի...:

Այս, ազատն Մասիս, կզա մի որ, ժամանակ, փոք մարդիկ քո կուրծքն ել կփորեն, զօր գու՞ «Ժամ ապետի» պես քո զանձերը միայն քեզ համար շպանես:

Համում ենք քաղաք: Մեր առաջին զործը լինում ե մաքրել մեր կոշիկների անորինակ ցեխը:

Կապսվա չամուսն ե, —բացագանչում են կոշիկ սրբող տղաները: Նրանք վաղուց ճանաչում են այդ ցեխը: Յեզ դա զարմանալի չե: Զբանցքն այցելող 30,000 հոգուց 10,000-ը զոնե զրանց մոտ ե մաքրել իր կոշիկները: Յերբ վճարում ենք սրբելու արժեքը՝ չարաճճի փոքրիկները բացագանչում են.

Եսոր ել խերպանք կապսեն...:

Այս, մատածում եմ յես, պիտի «խերվենք կապսեն» վոչ միայն այսոր, վոչ միայն դուք, փոքրիկ չարաճճիներ, այլև բոլորը՝ Շիրակի բոլոր բնակիչները՝ քաղաքացի և գյուղացի ժիասին, և պիտի «խերվեն» վոչ թե նրա ցեխից, ինչպես դուք այսոր, այլ նրա ջրից, լույսից և ջեր. մությունից...:

Դ. ԱՐԱՎ

ԵԼԵՔՏՐՈԿԱՅԱՆԸ

Զվարթ ե, զվարթ և ժպտում այս գիշերը—
Յեզ կուրծքս ուսչում ե հույսով.
Մեր հին այս քաղաքը, մթին այս քաղաքը,
Վողողել ենք հրթիս մի լույսում:

Հիշում եմ անցյալ մեր գիշերը—
Հիշում եմ վողոցները մթին...
Յեզ սնային հռւզոս ու գրավիչ են
Լուսինները՝ լուսինները անթիվ...:

Խաչաձե ձգված լարերի մեջ
Վողում և հուսահատ քամին—
Եղմարդիւմ և մթին կամարի տակ
Մի ծոված դաշույն արծաթի...:

Ում և պետք, ում և պետք դաշույնը ժանդուտ—
Ո՞վ և վոր կովում և աւար դաշույնով—
Յերբ ահա՝ շտեպսերով խաղում ե Սերգոն
Յեզ զվարթացնում և փոքրիկ նախշունին...:

Սերգոն պտառում ե—ժպտում ե իր կինը.
Նախշունը ցատկրուում ե թախտին—
Իսկ Շուշան տատիկը քաշվել ե մի անկյունը՝
Վախենում ե լումպը պայմթի...:

Զվարթ ե, զվարթ և ժպտում այս գիշերը...
Յեզ չերկինք իզուր ե սուրբ տաշում—
Քանի ընտանիք զիս իր լամպը փորձում ե—
Վասում, հանգցնում և աչսոր...:

* *

Բայց քո սրտում զըվարդ՝
Ամեն որ նոր նըվագ—
Բացգում և նոր զըրվագ...
Խորհրդակին չերկիր—
Յերկաթահինչ չերգիդ
Չախանիշին վատահ:

Ու, ինդուստրիկ վաղվա
Մեր ասորյա հուրդում—
Ու ինդուստրիկ վաղվան՝
Մեր ինունդը բաղում—
Մեր ինդուստրիկ վաղվա
Բաղմարարբառ լիզուն...:

Ժպտում և վաղը վասում
Յեզ ձյուդերում մթար
Յեզ թաղերում տկար—
Ամեն հնչուն ու տառ:

Փոխվում ե վառ յերգի —
Փայլատակիր զվարդ
Իմ հայրենի՛ յերկիր....:

Աշխատանքով տոկուն
Վառվում ե մեր հոգին —
Յեզ չնչին գործն անդամ
Իր ելությամբ ներքին
Դառնում ե մեծ մի քար
Խորհրդացին շենքի....:

* *

Անձայրածիր յերկիր.
Բանվորության յերկիր
Յերկիր բուժվաղ վերքի —
Առողջացող վերքիդ
Կլինենք մենք սպեղանի,
Մեր հարազատ յերկիր....:

Մ. ԱՐՄԵՆ

ՅԵՐԱԶ ԶՐԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

Անցնում եր դաշտերով հին սելլ,
Դաշտերը յերաշտից դեղին դարձած,
Սալի ճամփու մորմնք եր լսելի
Սալի վրա նա քարացած արձան:

Սովալլուկ գեղջուկի նիհար թեների պես,
Հասկերը մուրացող ձեռքեր դարձած,
Զգվեցին, սողացին սալլի չորս կողմերից
Յեզ գեպի նա բարձրացան:

Աւ հանկարծ մտերիմ մի մեղեղու պես,
Զրանցքի կարկաչով բռնվից դաշտն արձակ,
Աւ հանկարծ թվաց թէ կարկաչց գետինը,
Հասկերը հորձանքով բարձրացան....:

ԼՈՒՍԱՏՈՆ

Հիգրոկայանն ե շառաջում անընդհատ,
Կյանք են առել մեր յերեկվա հուսերը,
ՀԵՅ, խավարի մեջ խարխափող գյուղակներ՝
Շուտ վառեցնք լույսերը:
Լուսերը մութի մեջ,
Մութը զոր թող գառնա,
Իրիկվա մութի գեմ
Հուր վառվի թող վառման:

Ելեքտրոլարեր կան ամեն կողմ, ամենուը,
Յանցել են իրտ, հեռազրասյան ուսերը,
Վորքան դժնի ու չարահուշ ե խավարը,
Դեմ, վառեցնք լույսերը:
Գիշերվա մութի մեջ
Արևներ թող բացվեն,
Խավարի թեփ դեմ
Մենք պայքար ենք բացել:

Խավարն իսկույն կլանում ե ամեն ինչ,
Յերբ բեկվում ե արեգակի սուսերը,
ՀԵՅ, գյուղակները հեռու, մոտիկ, կոչ յեկած,
Յելեք, վառեք լույսերը:

ՏՈՒՖԸ

Ինչու գես զուր քնած են հողերի տակ
Տուֆաքարերը:
Տուֆաքարերը ուս գիշերվա նման,
Տուֆաքարերը ցիրեկվա պես զեղին:

— Տուֆը հողի տակ,
Տուֆը հողի տակ,
Ովքեր են թակթակում այնտեղ....:
— Քլունգնվ զինված,
Փորիչով զինված,
Քանդում ենք, քանդում ենք արդեն...

ՑԱՆԿ

Եջ

Յեվ ելի մի նոր խումբ բանվորական,
Գնում և ահա:


— Գնում ենք քլունգով զինված,
Չհոքներիս բան կա ու փորիչ,
Մենք առաջարկում ենք հանելու
Տերկրի փորից:
Հողը ծանր նատվածքով իր հասա,
Ճնշում և ու ծածկում նրան,
Զպետք և մի քիչ հող խակ թողնել
Տուֆաքարի վրա:
Կքանդենք այդ հանքը, կքանդենք
Աւ վաղը՝ այս յերկրում հողեղեն՝
Կպանդնեն առաջաշեն շենքերը,
Տուֆաշեն փողոցները կկանդնեն:
Տուֆե կկանդնի այս յերկիրը,
Վոր հողեղեն եր յերկի,
Կպանդնի վաս ու պապղուն,
Վորպես յերեկ...

Ել վոչինչ. պայթյունի միայն հինչ,
Ու մեկ ել քլունգի թակաց,
Իսկ տուֆը գալարվում եր հրճավանքից
Դիտնի տակով...

— Տուֆը հողի տակ,
Տուֆը հողի տակ,
Ովքե՞ր են թակթակում այնտեղ...

— Քլանդնվ զինված,
Փորիչնվ զինված,
Բանդում ենք բանվում ենք արդեն...

—



1. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ - Յեմ.	Յարու-
ոլավոկի, թարգմ. Սիմակ	3
2. ՀՈԿՏԵՄԲԵՐԸ. — Ա. Յակովլեվ թարգմ. Հ. Պետրոսյան	4
3. ԲՆԱԶԴԻԾ. — Ա. Դորոգոչենկո, թարգմ. Տ. Հախումյան	17
4. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԽՈՐՀՈՒՄԴՅԱՆԵՐԻՆ. — Ա. Կոստերին	
թարգմ. Հ. Պետրոսյան	29
5. ԲԱՆԱԿՈՒՄ. — Ե. Ալեքսեև թարգմ. Սիմակ	35
6. ԳՅՈՒՂՅՈՒՄ. — Մ. Սիվաչով, թարգմ. Հ. Հայրապետյան	50
7. ԲԱՆՎ. և ԳՅՈՒՂ. ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ	
ՊԱՏԳԻՐԱԿԻՐ. — Ա. Դորոխով, թարգմ. Տ. Հախումյան	57
8. ՎԱԳՐԻ ԶԱԳԻ. — Առալենդեր, թարգմ. Տ. Հախումյան	64
9. ՍԱՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ՃՈՒՏԵՐԸ. — Բլյախին	74
10. ՀՈԿՏԵՄԲԵՐԱԿԱՆ. — Վ. Նորենց	93
11. ԲԱՅԼՇԵՎԻԿԻ Ե ՇԻՐԿԱՆԱԼԻ. — Հ. Հակոբյան	94
12. ՇԻՐԱԿԻ ԶՐԱՆՑԲԸ. — Առ. Զորյան.	97
13. ԵԼԵՔՏՐՈԿԱՅԱՆԸ. — Արով	108
14. ՅԵՐԱԶ ԶՐԱՆՑԲԻ ՄԱՍԻՆ. — Մ. Արմեն	110
15. ԼՈՒԽԱՏՈՆ. — Մ. Արմեն	111
16. ՏՈՒՖԸ. — Մ. Արմեն	111

1927թ.

ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Հոկտեմբեր—Հատվածներ լինինի, Բուխարինի
և Ստալինի.
2. Ճեսակով Ս. Պ.—Գյուղացիությանը հոկտեմբերից ըստ հեղափոխության մեջ, հջ 36 15 կ.
3. Պ. Ի. Լենին—Հոկտեմբերիան հեղ. (ձառնը
և հոգվածներ).

Դիմել՝ Պետրաքի բաժանմունքներին
յեզ զարխանութներին

ՀՀ Ազգային գրադարան



NL0381651

